

Ա-57

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ  
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ԱՐԱՄԼԵՎՈՒԻ ԱՆԱՆՅԱՆ

ՀԱՅՈՑ ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՆԸ ՀԱՅ-ԹՈՒՐԷԱԿԱՆ  
ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ (1991-2004թթ.)

Է.00.01 «Հայոց պատմություն» մասնագիտությամբ պատմական  
գիտությունների քննաժողովի գիտական աստիճանի հայցման  
ատենախոսության

ՍԵՂԱՍԳԻՐ

ԵՐԵՎԱՆ-2005

Մեծաբա պր. Բ. Մաթթեայի  
Երեւանի մարզպետի և լաւա-  
հայն մարզպետի

Ատենախոսության բեման հաստատվել է ՀՀ ԳԱԱ Հայոց ցեղասպանության  
թանգարան-ինստիտուտի գիտական խորհրդում

*Վ. Մաթթեայի*

ԳԻՏԱԿԱՆ ՂԵԿԱՎԱՐ՝ պատմական գիտությունների թեկնածու,  
դոցենտ Ռ. Ա. Մաթթեայի

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԸՆԴԴԻՄԱԽՈՍՆԵՐ՝ պատմական գիտությունների դոկտոր  
Է. Գ. Մինասյան

պատմական գիտությունների թեկնածու,  
դոցենտ Ա. Վ. Մաթթեայի

ԱՈՒՋԱՏԱՐ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ՝ Խ. Արմյանի անվան ՀՊՄՀ

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2005թ. հունիսի 21 -ին ժ.  
14.00-ին ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտում գործող ԲՈՀ-ի 004  
մասնագիտական խորհրդի նիստում (Հասցեն՝ 375019, ք. Երևան, Մ.  
Բաղրամյան պող. ,24 գ.):

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ՀՀ ԳԱԱ Պատմության  
ինստիտուտի գիտական կաքինետում:

Մեղմագիրն առաքված է 2004թ. մայիսի 19-ին:

Մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար,  
պատմական գիտությունների թեկնածու  
*Կ. Հ. Խաչատրյան*

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

ԹԵՄԱՅԻ ԱՐԴԻԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ: Հայաստանի անկախության  
վերականգնումը շրջադարձային նշանակություն ունեցավ հայ ժողովրդի  
բազմադարյա պատմության մեջ: Իբրև միջազգային հարաբերությունների  
սուրյեկտ, Հայաստանի Հանրապետության առջև ծառայալ արտաքին  
քաղաքական հայեցակարգի մշակման հրամայականը: Այս համատեքստում  
ամենաբարդ հիմնահարցը հայ-թուրքական երկկողմ հարաբերությունների  
օրակարգի ձևավորումն էր: 1991թ. դեկտեմբերի 16-ին Թուրքիան ճանաչեց  
Հայաստանի Հանրապետության անկախությունը, սակայն դիվանագիտական  
հարաբերություններ չհաստատեց պաշտոնական Երևանի հետ՝ առաջ քաշելով  
հարաբերությունների կարգավորման մի շարք նախապայմաններ (իրաժարվել  
Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման քաղաքականությունից,  
Արցախը հայտարարել Ադրբեջանի մաս է այլն): Թեև ՀՀ առաջին  
իշխանությունները երկկողմ բանակցությունների ընթացքում երբևէ չեն  
անդրադարձել Թուրքիայի կողմից Մեծ եղեռնի ճանաչման խնդրին, 1915-  
1923թթ. Օսմանյան կայսրությունում իրականացված ցեղասպանության հարցը,  
թուրք դիվանագետների հետևողական ջանքերով, վճռական ազդեցություն է  
թողել հայ-թուրքական հարաբերությունների վրա:

Թուրքիայի Հանրապետությունը ցայսօր պետական մակարդակով  
ժխտում է Հայոց ցեղասպանությունը, թուրքերը ձևավորել են պատմական  
իրողությունների նեգափոխման օրենսդրական և ինստիտուցիոնալ դաշտ՝  
ակտիվ դիվանագիտական պայքար ծավալելով Մեծ եղեռնի միջազգային  
ճանաչման դեմ: Այս գործելաոճը, ժամանակակից քաղաքագիտության  
սկզբունքների համաձայն, միանշանակորեն կարող է որակվել որպես  
ծրագրված պետական քաղաքականություն. առկա են գաղափարախոսական  
հիմքը. օրենսդրական «դաշտը» պաշտոնապես անընդհատ քարոզվող  
տեսակետի և միտումնավոր նենգափոխված պատմության ձևով (policy), կան  
պետության կողմից առաջ քաշված խնդիրներ և նպատակներ (politics), ինչպես  
նաև ժխտմանը միտված քաղաքական, դիվանագիտական և գիտական  
հաստատությունների ցանց. որն անմիջականորեն իրականացնում է  
թուրքական պետության քաղաքական գիծը (polity): Փաստենք, որ  
հակահայկական քաղաքական առաջնահերթությամբ են շարժվում նաև  
այսօրվա թուրքական իսթերլիզմենթի ներկայացուցիչները: Անկախ իշխող  
քաղաքական վարչակարգից՝ Անկարան հավատարիմ է մնում խնդրո  
առարկայի վերաբերյալ առկա իր խոտոր սկզբունքներին: Ավելին՝  
շարունակում է զարգացնել և կատարելագործել ժխտման մեխանիզմները,  
սեփական քաղաքական տեսադաշտում անընդհատ ներառելով նորերը: Այս  
առումով կարևոր է հասկանալ և ճանաչել այն մեթոդներն ու ձևերը, որով  
առաջնորդվել են Թուրքիայում որոշումներ ընդունողները՝ վերջին  
տասնամյակների ընթացքում Հայոց ցեղասպանության ճանաչմանն դեմ  
ուղղված պայքարը հաջողելու համար: Այդ իսկ պատճառով, այսօր՝ Մեծ  
եղեռնից 90 տարի անց, կրկին հրատապ է դառնում Թուրքիայի վարած  
հայատյաց քաղաքականության ուղղման արտաքինությունը՝ Անկարայի  
գործողություններին համարժեք գնահատական տալու, վերջինիս  
քաղաքականությունը կիրառական տեսանկյունից ներկայացնելու,  
քաղաքական ծրագրավորման ոլորտում անցյալում թույլ տված սխալները  
չկրկնելու համար:

**ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԱԳՐԱԿԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐԸ:**

Ժամանակագրական առումով ատենախոսությունն ընդգրկում է 1991-2004թթ.: Ուսումնասիրվող ժամանակաշրջանի ընտրությունը պայմանավորված է Հայաստանի Հանրապետության անկախության հռչակումով, այդ իրադարձությունից հետո պաշտոնական Երևանի արտաքին քաղաքական կուրսի ձևավորմամբ, հայ- բուրբակյան հարաբերությունների օրակարգում Հայոց ցեղասպանության խնդրի սահմանմամբ ու անկախ հանրապետության առաջին քաղաքական ընտրախավի՝ ցեղասպանության հարցը երկկողմ հարաբերությունների ծիրից օտարելու դիրքորոշմամբ: Արդեն 1998թ., նախագահական ընտրություններում հաղթանակ տանելուց հետո, Ռ. Քոչարյանը Հայոց ցեղասպանության ճանաչման խնդիրը ներառեց Հայաստանի արտաքին քաղաքականության հայեցակարգում: Իսկ 2004թ. Հայոց ցեղասպանության հարցը մտավ բուրբ- եվրոպական հարաբերությունների օրակարգ, ինչով էլ ամփոփվում է մեր աշխատությունը: Ատենախոսության մեջ հիշատակված որոշ փաստեր և իրադարձություններ դուրս են գալիս բեմայի ժամանակագրական շրջանակներից՝ պայմանավորված մի շարք կարևոր հիմնահարցերի ընդհանրական ներկայացման անհրաժեշտությամբ:

**ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ:**

Ատենախոսության նպատակն է ուսումնասիրել և լուսաբանել ՀՀ անկախացումից հետո երկրի արտաքին քաղաքականության անկյունաքարային ուղղություններից մեկը և դրանում պատմական անցյալի արդիական ազդեցությունը: Թեմայի հետազոտման ընթացքում ուշադրություն ենք դարձրել հետևյալ հարցերին.

- Հայաստան-Թուրքիա հարաբերությունների քաղաքական օրակարգի ձևավորումը 1990-ական թթ.,
- Երկկողմ հարաբերություններում Հայոց ցեղասպանության գործոնը և նրա ազդեցությունը քաղաքական շփումներ հաստատելու ոլորտում,
- 1998թ. Հայաստանի Հանրապետության արտաքին քաղաքականության փոփոխությունը և Հայոց ցեղասպանության ճանաչման հարցի ներառումը դիվանագիտական օրակարգում,
- Հասարակական երկխոսությունը և դրա ներգործությունը միջպետական հարաբերությունների վրա,
- Մեծ եղեռնի ճանաչման անհրաժեշտությունը Եվրամիությանը Թուրքիայի անդամակցության համար:

**ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱՆ:** Ատենախոսության բեման

Հայաստանի և Թուրքիայի հարաբերություններն են, դրանցում իրավապայմանագրային դաշտի բացակայությունը և Հայոց ցեղասպանության խնդրի արժարժումը: Զննարկվում են նաև դիվանագիտական կապերի բացակայության պայմաններում հասարակական շփումների հիմնահարցն ու հիշյալ ոլորտում տեղի ունեցող զարգացումների միտումները:

**ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՏԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՆՈՐՈՒՅԹԸ:**

Ներկայացված խնդիրն իր ամբողջության մեջ նախկինում համակարգված ուսումնասիրության չի արժանացել: Առաջին անգամ գիտական շրջանառության մեջ է մտցնում Հայաստանի անկախությանը հաջորդած շրջանում հայ-բուրբակյան հարաբերությունների բեման, դրանցում Հայոց ցեղասպանության հիմնահարցի նշանակությունը: Վերականգնվում է կիսապաշտոնական Թուրք-հայկական հաշտեցման հանձնաժողովի

գործունեության պատմությունը: Աշխատանքի գիտական արդյունքները և նորույթը ամփոփված են եզրահանգումներում, որոնք բխում են առաջադրված խնդիրների պարզաբանումից:

**ԱՇԽԱՏԱՆՔԻ ՄԵԹՈԴԱԿԱՆ ՀԻՍՔԵՐԸ:**

Հետազոտվող խնդիրները դիտարկել ենք պատմաբնական, փաստագրական և վիճակագրական տվյալների վերլուծության միջոցով, որոնք բացահայտում են Հայաստանի և Թուրքիայի հարաբերություններում առկա վիճակը, հանգամանալի ներկայացվում է Հայոց ցեղասպանության խնդրի առաջնային դերը երկկողմ հարաբերություններում: Միջազգային հարաբերությունների հետազոտման գործնական մեթոդով վերլուծել ենք հայ- բուրբակյան հարաբերություններին առնչվող, մինչ այժմ քիչ լուսաբանված իրադարձություններ, որոնք ազդել են երկկողմ հարաբերությունների վրա:

**ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳՈՐԾՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ:**

Աշխատանքում ներկայացված տեղեկությունները, կատարված վերլուծությունները ու առաջադրված խնդիրների լուծման տարբերակները կարող են նպաստել արդի շրջանի հայ-բուրբակյան հարաբերությունների ամբողջական պատկերացմանը: Ատենախոսությունը գործնական և տեսական նշանակություն ունի ու կարող է հետաքրքրել Հայաստանի և Թուրքիայի ժամանակակից պատմության ուսումնասիրողներին, Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման գործընթացը հետազոտողներին: Կարող է օգտագործվել նաև քաղաքական ծրագրավորման ոլորտում:

**ԹԵՄԱՅԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎԱԾՈՒԹՅԱՆ ԱՍՏԻՃԱՆԸ:**

Ժամանակակից հայ-բուրբակյան հարաբերությունների որոշ հարցեր մշտապես գտնվել են հայ պատմագրության ուշադրության կենտրոնում, սակայն այդ հարցի վերաբերյալ դեռևս համապարփակ ուսումնասիրություն չկա: Նախկինում առավելաբար քննարկվել են հայ- բուրբակյան հարաբերությունների որոշ ոլորտներ:<sup>1</sup>

Ատենախոսության համար հիմք են ծառայել Հայաստանի Ազգային արխիվում<sup>2</sup>, ՀՀ ԳԱԱ Հայոց ցեղասպանության քանգարան-ինստիտուտի գիտական ֆոնդերում պահվող փաստաթղթերը<sup>3</sup>, ինչպես նաև հայերենով, բուրբերենով և այլ լեզուներով առկա գրականությունը: Կարևոր տեղ է հասկացվում Հայաստանի Հանրապետության<sup>4</sup> և Թուրքիայի պետական գործիչների հայտարարություններին, դիվանագիտական և պաշտոնական փաստաթղթերին<sup>5</sup>, Հայոց ցեղասպանության վերաբերյալ բուրբակյան պաշտոնական տեսակետն արտահայտող վավերագրերին (նախագահների և վարչապետերի հայտարարություններ, պաշտոնական հայեցակարգեր.

<sup>1</sup> Դակոբ Չաքրյան, Ղարաբաղյան հիմնահարցը հայ-բուրբակյան հարաբերությունների համատեքստում, Երևան, 1998, Ռ. Սաֆրաստյան, «Հնարավոր չէ 21-դարում պատեհներ ստեղծել հարևանների միջև...», Երևան, 2003, Զ. Դեմոյան, Ղարաբաղյան հակամարտությունը և բուրբակյան գործոնը, Երևան, 2002, Ռուբեն Սաֆրաստյան, Դայ- բուրբակյան սահմանի նշանակությունը, Դայաստան- Թուրքիա. Բաց խոսակցություն, Երևան, 2005, Սեդաթ Լաչինցի, Թուրքիայի անդամակցությունը Եվրամիությանը և Դայկական հարցը, Դայ- բուրբակյան սահմանի նշանակությունը, Դայաստան- Թուրքիա. Բաց խոսակցություն, Երևան, 2005:

<sup>2</sup> Դայաստանի ազգային արխիվ, Ֆ. 326, ցուց 7, Գործ 86, 106:

<sup>3</sup> ԴՀ ԳԱԱ ԴՅԹԻ, բաժին 32, թպ 26, 44:

<sup>4</sup> ԴՀ Նախագահի պաշտոնական վեբ հանգույց <http://www.presidnet.am> .

<sup>5</sup> Թուրքիայի Դանրապետության արտաքին գործերի նախարարության պաշտոնական վեբ հանգույց, <http://www.mfa.gov.tr> .

Թուրքիայի ԱԳՆ հաղորդագրություններ, դիվանագիտական նոտաներ, դիվանագիտական ներկայացուցչությունների հրապարակած տեղեկատվություն և այլն):<sup>6</sup> Արտերկրում հակահայկական գործունեության վերաբերյալ ուշագրավ տեղեկություններ կան նաև թուրքական կիսապաշտոնական կամ լոբբիստական խմբերի կողմից ներկայացված փաստաթղթերում և ժողովածուներում, որոնք բացահայտում են դեռևս 1980-ականներից Հայոց ցեղասպանության ճանաչման դեմ ուղղված թուրքական քաղաքականությունը:<sup>7</sup> Հաշվի առնելով քեմալի ժամանակագրական շրջանակները և ուսումնասիրվածության աստիճանը, ուշադրություն ենք հասկացրել թուրքական պետական և կրթական հաստատությունների համացանցային տեղեկատվությանը:

Նշենք, որ պատմագրությունում հանգամանալի լուսաբանված են 1918-1920թթ. Հայաստան-Թուրքիա միջպետական հարաբերությունների ընթացքն ու զարգացումը, ինչի մասին արժեքավոր տեղեկություններ կան ոչ միայն ժամանակակիցների՝ օրինակ, Ա. Խատիսյանի<sup>8</sup>, Մ. Վրացյանի<sup>9</sup>, Շ. Նաթալիի<sup>10</sup>, Բ. Կարաբերիի<sup>11</sup> և այլոց հուշագրություններում, այլև Ռ. Հովհաննիսյանի<sup>12</sup>, Է. Չոհրաբյանի<sup>13</sup> և այլ հեղինակների աշխատություններում:<sup>14</sup>

Թուրքիայի արտաքին քաղաքական կուրսի, աշխարհաքաղաքական գերակայությունների փոփոխության վերաբերյալ ուշագրավ հրապարակումներ ունեն թուրք գիտնականներ Օրալ Սանդերը<sup>15</sup>, մախլիսի արտագործնախարար Իսմայիլ Չենը<sup>16</sup>, Շուբրու Էլեքդաղը<sup>17</sup>։ Նրանց կարծիքով, ներկա իրողությունների պայմաններում Թուրքիան պարտավոր է կարևոր դերակատարություն ստանձնել տարածաշրջանում, վերանայել սեփական անվտանգության համակարգը:

Այս առումով առաջատարի դերը ստանձնել է Թուրքիայի արտաքին գործերի նախարարության Perceptions հանդեսը, որը պարբերաբար հրապարակում է թուրք դիվանագետների և թուրքական աշխարհաքաղաքական շահերի տեսանկյունից արտահայտող քաղաքագետների հոդվածները: Սասնավորապես, դեռ 1990-ական թվականներին թուրք դիվանագետներն ու քաղաքագետները փորձում են արժևորել Թուրքիայի դիրքորոշումը

<sup>6</sup> Türkiye Cumhuriyetinin Devletarsivleri, <http://www.devletarsivleri.gov.tr>

<sup>7</sup> Armenian Allegations: Myth and reality: A handbook of facts and Documents: Compiled & edited by the Assembly of Turkish American Assosiations, Washington DC, 1987, p 39.

<sup>8</sup> Ա. Խատիսյան, Հայաստանի Հանրապետության ծագումն ու զարգացումը, Աթենք, 1930:

<sup>9</sup> Ս. Վրացյան, Հայաստանի Հանրապետություն, Երևան, Հայաստան, 1993:

<sup>10</sup> Շահան Նաթալի, Թուրքերը և մենք, Երևան, 1992, Shahan Natalie, The Turks and Us, Punik Publishers, Nagorno Karabakh, 2002.

<sup>11</sup> Kazım Karabekir, Cihan harbinde neden girdik, nasıl idare ettik? Kit. I. İstanbul, 1938.

<sup>12</sup> R. Hovhannisian, Armenia on the road to Independence 1918, Berkley- L.A., 1967, ինչպես նաև R. Hovhannisian, The Republic of Armenia, v1-2, Berkley, 1971-1982.

<sup>13</sup> Է. Չոհրաբյան, 1920թ. թուրք- հայկական պատերազմը և տերությունները: Ե., 1997:

<sup>14</sup> H. Dasnabedian, History of the Armenian Revolutionary Federation Dashnaksutyan (1890/1924), Milan, 1990.

<sup>15</sup> Oral Sander, Turkiyenin dış politikası, Ankara, 1998.

<sup>16</sup> I. Cem, Gelecek için denemeler, Ankara, 2000.

<sup>17</sup> Şükrü Elekdag, "2 1/2 War Strategy". Vol. I, No. I, March- May 1996.

երկրաքաղաքական նոր հավասարակշռության պայմաններում:<sup>18</sup> Թուրքական պետության քաղաքական հետագա գործելաճին նվիրված քննարկումներում առանձնահատուկ տեղ է գրավել քաղաքական սցենարային ծրագրավորումը<sup>19</sup>, ինչպես նաև Թուրքիայի արտաքին քաղաքականության ակտիվացումը, Եվրոպայի, Մերձավոր Արևելքի, Կովկասի և Կենտրոնական Ասիայի տարածաշրջաններում:<sup>20</sup>

Թուրքական պատմագրությունում բազմաթիվ են նաև հայ-թուրքական հարաբերությունների դիպաշարը նենգափոխող աշխատություններ, օրինակ Քյուչուքի<sup>21</sup>, Ալի Քարաջայի<sup>22</sup>, Մուսա Շաշնազի<sup>23</sup>, Յուսուֆ Հալաչոլուի<sup>24</sup>, Էյամուրան Գյուրումի<sup>25</sup>, Էսաթ Ուրասի<sup>26</sup>, Ալի Էշրեֆ Ուզունդերեի<sup>27</sup>, Թ. Գյոքբիլգինի<sup>28</sup>, Շադի Քոչաշի<sup>29</sup>, Սիմ Քենալ Էոքեի<sup>30</sup>, Սալահի Սունելի<sup>31</sup>, Հիքմեթ Օզդենիրի<sup>32</sup>, Մուլեյման Քոջաբաշի<sup>33</sup>, Է. Իլթերի<sup>34</sup>, Քենալ Քարափաթի<sup>35</sup> և այլոց երկերը:<sup>36</sup> Թուրքական պաշտոնական պատմագրության ներկայացուցիչները աչքի են ընկնում ծայրահեղ հակահայ կեցվածքով: Նենգափոխելով պատմական իրողությունները, նրանք, հայ-թուրքական հարաբերությունները բեկում են ծուռ հայելու մեջ: Իրենց նպատակներին հասնելու համար թուրքական իշխանությունները չեն խորշում օգտագործել նաև այլազգի, մասնավորապես ամերիկացի պատմաբանների, որոնք երկկողմ հարաբերությունների վերաբերյալ ունեն ոչ պակաս կողմնակալ

<sup>18</sup> Nezihi Çakar: A Strategic Overview of Turkey. Perceptions:Journal of International Affairs, 1998 June- August, Volume III- Number 2.

<sup>19</sup> Ismail Cem: Turkey: Setting sail to the 21<sup>st</sup> Century. Perceptions:Journal of International Affairs, 1997 September- November, Volume II- Number 3.

<sup>20</sup> Alan Makovsky, The new activism in the Turkish foreign policy: SAIS Rewiew, Winter-Spring 1999, Washington.

<sup>21</sup> C. Kütük, Osmanlı Diplomasinde Ermeni Meselesi' nin Ortaya Çıkışı (1878-1897), İkinci Baskı, Türk Dünyası Araştırmaları Vakfı, İstanbul, 1984.

<sup>22</sup> Ali Karaca, Anadolu İslahı ve Ahmet Şakir Paşa (1838-1899), İstanbul, 1993.

<sup>23</sup> Musa Şaşmaz, British Policy and the Application of Reforms of the Armenians in Esatern Anatolia 1877- 1897, Türk Tarih Kurumu, Ankara, 2000.

<sup>24</sup> Yusuf Halaçoğlu, Realities Behind the Relocation, from " Armenians in the Late Ottoman Period", Ankara, 2000.

<sup>25</sup> Kamuran Gürün, The Armenian File, The Myth of Innocence Exposed, N.Y- London, 1985.

<sup>26</sup> Esat Uras, Tarihte Ermeniler ve Ermeni Meselesi, Ankara, 1950.

<sup>27</sup> A. E. Uzundere, İnsanlık Suçu: İğdir ve Çervesinde Ermeniler'in Türk Kırımı , Ankara, TTK Basımevi, 2002.

<sup>28</sup> T. Gökbilgin, Milli Mücadele Başlarken. Mondros Mütarekesinden Sivas Kongresine, Birinci Kitap, Ankara, 1959.

<sup>29</sup> Şadı Koçaş, Tarih Boyunca Ermeniler ve Türk Ermeni İlişkileri, Ankara, 1967.

<sup>30</sup> Öke, Mim Kemal, Yüzyılın Kan Davası: Ermeni Sorunu, 1914-1923, 3. Baskı, İstanbul, Aksoy, 2001.

<sup>31</sup> Sahali. R. Sonyel. Minorities and Destruction of the Ottoman Empire Ankara 1993.

<sup>32</sup> H. Özdemir [ve baş], Ermeniler: Sürgün ve Göç, Ankara, 2004.

<sup>33</sup> Süleyman Kocabaş, "Ermeni meselesi: nedir, ne değildir?", İstanbul, 1984.

<sup>34</sup> Erdal İlter, Türk- Ermeni İlişkilerin Bibliyografyası, Ankara, Ankara Üniversitesi, 1997.

<sup>35</sup> Karpal Kemal H. Ottoman Population 1830-1914, The University of Wisconsin Press, 1985.

<sup>36</sup> Ismail Metin, Osmanlinin Kanlı Tarihi, Ant Yayınları, İstanbul, 1996, Çark Y.G. Türk Devlet Hizmetinde Ermeniler 1453-1953, İstanbul, 1953.

կարծիք:<sup>37</sup> Պաշտոնական պատմագրության դրույթները կրկնորոշում է քաղաքագիտական միտքը, որի ներկայացուցիչներ Հ. Ջաբարլը<sup>38</sup>, Ռ. Չևիրյոզը<sup>39</sup>, Ք. Բաաբընը<sup>40</sup>, Ս. Էոզեթը<sup>41</sup> և ուրիշներ<sup>42</sup>, փորձեր են անում միջազգային հարաբերությունների տեսության մեթոդաբանության դիրքերից հիմնավորել հակահայկական արշավը:

Ի հակառակի չէ արտաքին քաղաքականության և հայ-թուրքական հարաբերությունների վերաբերյալ թուրքական պատմագրության հակագիտական տեսություններին, այս ոլորտում ծանրակշիռ ներդրում ունեն հայ և օտարազգի ուսումնասիրողներ, մասնավորապես Ն. Հովհաննիսյանը<sup>43</sup>, Լ. Խուրշուդյանը<sup>44</sup>, Ա. Սվարանցը<sup>45</sup>, Ժ. Լիպարիտյանը<sup>46</sup>, Լ. Խրիզանթոփուլոսը<sup>47</sup>, Վ. Ստուպիշինը<sup>48</sup>, Ա. Կուրտովը, Ա. Խալմուխամեդովը<sup>49</sup>, Ա. Ալվազյանը<sup>50</sup>, Ի. Մուրադյանը<sup>51</sup> և այլք:<sup>52</sup>

<sup>37</sup> Shaw Stanford J and Kural Ezel. "History of the Ottoman Empire and Modern Turkey", vol. 2. N.Y. 1977, pp. 315-316., McCarthy Justin, Muslims and Minorities, NY, 1983., McCarthy Justin, The Anatolian Armenians, 1912-1922, from Armenians in the Ottoman Empire and Modern Turkey (1915-1926), Boğazci University Publications, Ankara 1992., McCarthy, Justin, Population of the Ottoman Armenians, Armenians in the Ottoman Empire and the Modern Turkey, Ankara, 2002.

<sup>38</sup> H. Cabbarlı, Bağimsizlik sonrası Ermenistan- Rusya İlişkileri, Ankara, ASAM, 2004.

<sup>39</sup> U. Çeviköz, Uluslararası İlişkileri yeni dengele, Ermenistan Özel Sayısı, TESEV, Ağustos, 2001, s. 11-16.

<sup>40</sup> Kamer Kasım, Uluslararası İlişkiler Bpyuntula Ermeni Sorunu: Bilim ve Akılın Aydınlığında Eğitim Dergisi: NİSAN 2003, YIL, 4, SAYI : 38.

<sup>41</sup> Prof. Dr. Sabahattin ÖZEL, ERMENİLERİN VE YABANCILARIN GÖZÜYLE TÜRKEMENİ İLİŞKİLERİ VE ERMENİ SORUNUNA BİR BAKIŞ, Nisan 2003, NİSAN EK SAYISI ISSN: 1303 – 9814.

<sup>42</sup> The Armenians in the Late Ottoman Period, ed. I. Benark., Ankara, 2001, Çaycı, Abdurrahman, "Türk-Ermeni İlişkilerinde Gerçekler", Tarihi Gelişmeler İçinde Türkiye'nin Sorunları Sempozyumu, Dün-Bugün-Yarın, Bildiriler, Ankara, 8-9 Mart 1990, Ankara, yay. y., 1992, s. 75-114., Gürün, Kamuran, "Türkiye-Ermenistan İlişkileri", Avrasya Etütleri, Cilt 3, No 1, 1996, s. 54-64., Kırzioğlu, M. Fahrettin, "Türk-Ermeni İlişkileri", Kıbrıs'ın Dünü-Bugünü Uluslararası Sempozyumu, Gazi Magosa, Doğu Akdeniz Üniversitesi ve Yüzüncü Yıl Üniversitesi, 1993, s. 93-106.

<sup>43</sup> Nikolay Hovhannisyanyan, The Foreign policy of Armenia, Yerevan, 1998.

<sup>44</sup> L. Խուրշուդյան, Հայոց ազգային գաղափարախոսություն, Երևան, 1999:

<sup>45</sup> Александр Сваранц, Пантюркизм в Геостратегии Турции на Кавказе, Москва, АГИ, 2002.

<sup>46</sup> Ժիրայր Լիպարիտյան, Պետականության մարտահրավերը. հայ քաղաքական միտքը անկախությունից ի վեր: Երևան, 1999:

<sup>47</sup> L. T. Chrysantopoulos, Caucasus Chronicles, Nation Building and Diplomacy in Armenia, 1993-1994, Princeton- London, 2002.

<sup>48</sup> В. Ступишин, Моя миссия в Армении, М., 2001.

<sup>49</sup> А. А. Куртов, А. М. Халмухамедов, Армения-Турция: Противостояние или Сотрудничество? ЮюАрмения: Проблемы независимого развитияюю, Москва 1998.

<sup>50</sup> Ա. Ալվազյան, Հիմնատարներ ազգային անվտանգության հայեցակարգի, Ի, Երևան 2004, նույնի Ղարաբաղյան հակամարտության կարգավորումը և Հայաստանի ռազմավարական անվտանգությունը, Երևան, 1998:

<sup>51</sup> Игорь Мурадян, Политика США и проблемы безопасности региона Южного Кавказа, Ереван, 2000.

<sup>52</sup> К.С. Гаджиев "Геополитика Кавказа", Москва, 2001, Ս. Պողոսյան, Պանթուրքիզմը Երեկ և այսօր, Երևան 1990, A. Ananyan & R. Careja, Formation and

Թուրքական պետության ցեղասպան բնույթին է անդրադառնում Ի. Մերինի աշխատությունը<sup>53</sup>, իսկ Յու. Բարսեղովի<sup>54</sup>, Պ. Օհանյանի<sup>55</sup> և Ռ. Բողոսյանի<sup>56</sup> ուսումնասիրությունները ներկայացնում են Թուրքիային միջազգային իրավական պատասխանատվության ենթարկելու մի քանի դրույթներ: Առեմախոսության համար կարևոր նշանակություն է ունեցել Յեղասպանության միջազգային ճանաչման շուրջ ծավալված պայքարին առնչվող բազմաթիվ փաստաթղթեր և աշխատություններ:<sup>57</sup>

Հընթացս թուրքական գիտական և հասարակական շրջանակներում հնչում են տեսակետներ, որոնք ոչ միայն չեն մերժում հայ- թուրքական կառուցողական երկխոսությունը, այլև առաջարկում են հարաբերությունների բարելավման իրատեսական ուղիներ: Թուրքական հասարակությունում աստիճանաբար ձևավորվում է մի շերտ, որը չի ժխտում Հայոց ցեղասպանությունը և անգամ կոչ է անում թուրքական կառավարությանը ընդունել պատմական ճշմարտությունը: Ազգամիջյան երկխոսության ջատագովներից են Թաներ Աբչյանը և այլ առաջադեմ մտավորականներ:<sup>58</sup>

Բրիտանահայ հրապարակախոս Ջորջ Ջեքչյանը առաջ է քաշում հայ-թուրքական հաշտեցման սեփական ապագայապայտական (ֆուտուրոլոգիական) ծրագիր. համաձայն որի 2015 թվականին թուրքական պետությունը կճանաչի Հայոց ցեղասպանությունը և ներողություն կխնդրի հայ ժողովրդից:<sup>59</sup> Երկխոսության վերաբերյալ ուրույն կարծիք է արտահայտում հայ- թուրքական հարաբերությունները հասարակական ցնցումների տեսանկյունից դիտարկող Գ. Խոնգվուրին: Նրա համոզմամբ, առանց անկեղծ զլջռումի թուրք ժողովուրդը և պապա չունի:<sup>60</sup> Ուշագրավ են նաև աշխարհաքաղաքականության բնագավառում ճանաչված մասնագետեր Ս. Հանթինգտոնի<sup>61</sup> և Ջ. Բզեժինսկուի<sup>62</sup> աշխատությունները, որոնք ամբողջության մեջ վերաբերելով արդի համաշխարհային զարգացումներին, հընթացս անդրադարձ են կատարում Թուրքիային և Հայաստանի հարաբերություններին:

Development of Political Opposition in Armenia, from Stumbling but Struggling : Political Opposition in Four Post- Soviet Countries, Moscow, Strategia, 2004, p. 182-184, Ա. Անանյան, Թուրքիայի Մերձավորարևելյան քաղաքականության ուրվագիծը և հայ-թուրքական հարաբերությունները իրաքյան ճգնաժամի համատեքստում, Տարածաշրջան, Նորավանդ հիմնադրամ, N2, 2003:

<sup>53</sup> Ismail Metin, Osmanlinin Kanlı Tarihi, Ant Yayinlari, Istanbul, 1996.

<sup>54</sup> Ю. Г. Барсегов. Турецкая доктрина международного права на службе политики геноцида, Москва, 2002., Ю. Барсегов: Геноцид армян- преследование по международному праву. Москва: Изд. Дом "XXI век- Согласие", 2000.

<sup>55</sup> Пасквал Оганян, Геноцид Армянского народа и защита прав человека, Ереван, 2003.

<sup>56</sup> R. Boghossian, Le Conflict Turco- Armenien, Beyrouth, 1987.

<sup>57</sup> Լ. Բարսեղյան, «Ամերիկայի Միացյալ Նահանգները, Հայոց ցեղասպանությունը և թուրքական հակազդեցությունը», Երևան, 2001, Լ. Բարսեղյան, Միջազգային հանրությունը դատապարտում է Հայոց ցեղասպանությունը, Երևան, 1998, Լ. Բարսեղյան, Ֆրանսիան Հայոց ցեղասպանությունը օրենսդրությամբ ճանաչած առաջին պետությունն է աշխարհում. Երևան, 2002 :

<sup>58</sup> Ավելի հանգամանակի տե՛ս Taner Akcam, Dialogue Across an International Divide: Essays Towards a Turkish- Armenian Dialogue, Zoryan Institute, 2001.

<sup>59</sup> George Jerjian: The Truth Will Set Us Free: Armenians and Turks Reconciled, London 2003.

<sup>60</sup> Г. Хомизури. Социальные потрясения в судьбах народов, Москва, 1997.

<sup>61</sup> S. Huntington, The Clash of Civilizations and the Remaking of World Order, NY, 1996.

<sup>62</sup> З. Бжежинский, Великая шахматная доска, М., 1999.

Քննարկել ենք ժամանակակից աշխարհաքաղաքական գործընթացներն արտացոլող նաև այլ աշխատություններ:<sup>63</sup> Ատենախոսության համար կարևորվում են բուրբական արտաքին քաղաքականության ընդհանրական համապատկերը ներկայացնող չեզոք հեղինակների ուսումնասիրությունները, որոնցում բացահայտվում են Թուրքիայի դիվանագիտության գործունեության ուղղություններն ու առաջնայնությունները, նրա գործելաոճն ու դինամիկան: Այս տեսանկյունից հետաքրքրական են քեմալի ընդգրկած ժամանակաշրջանին նախորդող տասնամյակներում բուրբական արտաքին քաղաքականությունը լուսաբանող գործերը:<sup>64</sup>

Հատկանշական է, որ մինչ այժմ Թուրքիան իրականացնում է Հայոց ցեղասպանության ժխտման ու ուրացության քաղաքականություն, այս խնդրին են անդրադառնում պատմաբաններ Վ. Տատրյանը<sup>65</sup>, Ռ. Հովհաննիսյանը<sup>66</sup>, Ի. Չարնին<sup>67</sup>, Լ. Մարաշլյանը<sup>68</sup>, Լ. Վարդանը<sup>69</sup>, Ա. Մարաֆյանը<sup>70</sup>, Ռ. Սմիթը<sup>71</sup> և այլք:<sup>72</sup>

<sup>63</sup> H. Joseph S. Nye, Jr. Understanding International Conflicts, New York, 1993, pp 98-128, International Institute for Strategic Studies, The Military Balance, 1995-1996, London, Oxford University Press, 1996, И. А. Василенко, Политическая Глобалистика, Москва, 2000.

<sup>64</sup> Б. М. Поцхверия, Внешняя политика Турции после Второй Мировой Войны, М, 1976, Б. М. Поцхверия, Внешняя политика Турции в 60-х начале 80-х годов, М, 1986, Erik J. Zürcher, Turkey, A Modern history, London- NY, 1994, N. Pope & H. Pope, Turkey Unveiled, New York 1997, С. Лурье, Метаморфозы традиционного сознания, СПб, 1994, Всемирная История (в 24 томах), том 20, том 23.

<sup>65</sup> Vahakn N. Dadrian, The History of the Armenian Genocide: Ethnic conflict from the Balkans to Anatolia and the Caucasus, Oxford, 1997, Vahakn N. Dadrian, The Key Elements in the Turkish Denial of the Armenian Genocide: A Case Study of Distortion and Falsification, Ontario 1999, Vahagn N. Dadrian, Warrant for Genocide, New Brunswick, NJ, 1999, Վահագն Տատրյան, Հայոց ցեղասպանությունը խորհրդարանային և պատմագիտական քննարկումներով, Վոթերթաուն, 1995:

<sup>66</sup> Р. Ованнисян: Отрицание: Геноцид Армян как прототип такого подхода: Вестник: Армянский Институт Международного права и Политологии в Москве, 2004.

<sup>67</sup> Encyclopedia of Genocide: Volume I: Ed. Israel W. Charny, Jerusalem, 1998.

<sup>68</sup> Marashlian L. Politics and Demography. Armenians, Turks and Kurds in the Ottoman Empire, Cambridge, MA, 1991.

<sup>69</sup> Լևոն Վարդան, Հայկական Տասնհինգը թուրք մատենագրության և մամուլի մեջ և մենք, Բեյրութ, 1998:

<sup>70</sup> Ara Sarafyan, The Ottoman Archives Debate and the Armenian Genocide, Armenian Forum, 2, N 1, Spring 1999.

<sup>71</sup> Roger Smith, Denial of the Armenian Genocide, Genocide A Critical Bibliographic Review, Vol 2, London, New York. Roger Smith, Eric Markusen, Robert Jay Lifton, Professional Ethics and the Denial of Armenian Genocide: Holocaust and Genocide Studies, 9(1), 1-22, Astourian, S. H. "Modern Turkish Identity and the Armenian Genocide: From Prejudice to Racist Nationalism". - In: Remembrance and Denial: The Case of the Armenian Genocide. Ed. Richard G. Hovannisian, Detroit, Wayne State University Press, 1998.

<sup>72</sup> Ջ. Կիրակոսյան, Առաջին համաշխարհային պատերազմը և արևմտահայությունը, Երևան, 1965, Инджикян О. Г. Социальная психология геноцида, Ереван, 1995, А. Авакян, Геноцид 1915г. Механизмы принятия и исполнения решений, Ереван, 1999, Ա. Պողոսյան, Կ Պողոսյան, Թուրքերը թուրքերի մասին, Երևան, 2000, Dave Davidian, Addressing Turkish Genocide Apologists, Volume I-IV, S.D.P. A. CRS Publication, 1989, Արամ Անանյան. Հայոց ցեղասպանության ժխտման թուրքական

Հայ-թուրքական հարաբերությունները մշտապես գտնվել են և ցայսօր էլ հայաստանյան և թուրքական մամուլի ուշադրության կենտրոնում են: Եվ եթե հայաստանյան լրատվամիջոցների համար Թուրքիայի ներքին ու արտաքին քաղաքականության համակողմանի լուսաբանումը առանձնահատուկ տեղ է գրավում, ապա թուրքական ՋԼՄ-ները երկկողմ հարաբերություններին անդրադառնում են դեպքից դեպք՝ սուկ Հայոց ցեղասպանության խնդրի միջազգային ճանաչմանը, հայ-թուրքական հարաբերությունների վերաբերյալ ՀՀ և այլ պետությունների իշխանությունների ներկայացուցիչների հայտարարություններին ու Արցախյան հակամարտության հետ կապված հիմնահարցերի: Հայ-թուրքական հարաբերությունների մասին ընդարձակ հրապարակումներ են գետնդրվել «Հայաստանի Հանրապետություն»<sup>73</sup>, «Ազգ»<sup>74</sup>, «Երկիր»<sup>75</sup>, «Հայոց աշխարհ»<sup>76</sup>, «Հայկական ժամանակ»<sup>77</sup>, «Առավոտ»<sup>78</sup> թերթերում, ռուսալեզու «Ճանձօճեճն Աճիճիճ»<sup>79</sup> պարբերականում՝ հաճախ իրարաներթ կարծիքներով ու տեսակետներով: Խնդրո առարկային ուշադրավ հրապարակումներ են մվիրել նաև «Գարուն»<sup>80</sup>, «Հայկական բանակ»<sup>81</sup>, «Հայացք Երևանից»<sup>82</sup> և այլ հանդեսներ: Սփյուռքի գաղթօջախներում լույս տեսնող հայկական պարբերականներից հարկ է առանձնացնել «Ասպարեզ»<sup>83</sup>, «Հայրենիք»<sup>84</sup> (ԱՄՆ), «Ժամանակ»<sup>85</sup> (Թուրքիա), անգլիալեզու «Արմինիդըն Ուիլիզն»<sup>86</sup>, «Արմինիդըն Բիփոթթըրը»<sup>87</sup> (ԱՄՆ), հայերեն և թուրքերեն լեզուներով մեզրգին»<sup>89</sup> հանդեսը: Հարուստ տեղեկատվություն են պարունակում հայկական լրատվական գործակալությունների՝ «Արմենպրեսի»<sup>90</sup> և «Նոյյան Տապանի»<sup>91</sup> հաղորդագրությունները, «Ազատություն»<sup>92</sup> ռադիոկայանի հայկական ծառայության հաղորդածամերը:

քաղաքականությունը հայ-թուրքական հարաբերությունների համատեքստում, Երևան, «Գարուն» 11, 2002, էջ 10-15, Անանյան Արամ, Հայոց ցեղասպանության ժխտման նոր փորձ. Թուրքական պատմական ընկերակցության «Հայեր. Աքսոր և գաղթ» աշխատության մասին, Երևան, 2005:

<sup>73</sup> Հայաստանի Հանրապետություն, 1991-2004:

<sup>74</sup> Ազգ, 1992-2004:

<sup>75</sup> Երկիր, 2000-2004:

<sup>76</sup> Հայոց աշխարհ, 2000-2004:

<sup>77</sup> Հայկական ժամանակ, 2000-2004:

<sup>78</sup> Առավոտ, 2000-2004:

<sup>79</sup> Респу́блика Армения, 1992-2004:

<sup>80</sup> Գարուն, 2002-2004:

<sup>81</sup> Հայկական բանակ, N2, 1996:

<sup>82</sup> Հայացք Երևանից, N 9/2002:

<sup>83</sup> Ասպարեզ, 2001:

<sup>84</sup> Հայրենիք, 2003:

<sup>85</sup> Ժամանակ, 2001-2003:

<sup>86</sup> Armenian Weekly, 2003.

<sup>87</sup> Armenian Reporter, 2001.

<sup>88</sup> Agos, 1998-2004.

<sup>89</sup> AIM, 2001.

<sup>90</sup> Արմենպրես, 2002-2004:

<sup>91</sup> Նոյյան Տապան, 1998-2003:

<sup>92</sup> RFE/RL Armenia Report, 2001.

Ուսումնասիրության համար անհրաժեշտ սկզբնաղբյուր են նաև քուրբակյան մամուլի հրատարակումները, որոնք տեղ են գտել «Միլլիյեթ»<sup>93</sup>, «Հուրիյեթ»<sup>94</sup>, «Ջումհուրիյեթ»<sup>95</sup>, «Ռադիկալ»<sup>96</sup>, «Սաբահ»<sup>97</sup>, «Չաման»<sup>98</sup>, «Յենի Շաֆաթ»<sup>99</sup>, «Յենի Բինյըլ»<sup>100</sup>, «Թըրքիշ դեյլի նյուս»<sup>101</sup> թերթերում: Հայ-քուրբակյան հարաբերությունները բազմիցս արծարծվել են նաև «Աբքյուլե»<sup>102</sup>, «Թըրքիշ փրոուք»<sup>103</sup>, «Փոփյուլեր քարիի դերգիսի»<sup>104</sup> համադասներում, քուրբակյան TRT<sup>105</sup> և CNN-Türk<sup>106</sup> հեռուստաընկերությունների համացանցային կայքէջերում, ինչպես նաև «Անադոլու»<sup>107</sup> գործակալության լրատվական հարդորագրություններում: Հիշյալ թեմայով որոշ նյութեր քաղել ենք ամերիկյան «Նյու Յորք Թայմս»<sup>108</sup>, «Վաշինգտոն Թայմս»<sup>109</sup>, «Վաշինգտոն Փոսթ»<sup>110</sup>, ռուսական «Նեգալիսիմայա գազետա»<sup>111</sup> թերթերից, ֆրանսիական «Ֆրանսպրես»<sup>112</sup> գործակալության լրատվությունից:

**ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱԼ**

**ՓՈՐՉԱԸՆՆՈՒԹՅՈՒՆԸ:**

Ատենախոսությունը քննարկվել է պաշտպանության և երաշխավորվել ՀՀ ԳԱԱ Հայոց ցեղասպանության բանգարան-ինստիտուտի գիտական խորհրդի և ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտի «Հայկական հարցի և Հայոց ցեղասպանության» բաժնի կողմից: Զննարկվող որոշ հարցեր լուսաբանվել են հեղինակի հոդվածներում և աշխատություններում:

**ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱԼ**

**ԿԱՌՈՒՅՎԱԾՔԸ**

**ԵՎ**

**ԲՈՎԱՆԴԱՎՈՒԹՅՈՒՆԸ:** Ատենախոսությունը քաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, վերջաբանից, օգտագործված աղբյուրների և գրականության ցանկից: Ընդհանուր ծավալը կազմում է 186 էջ:

*Ներածությունում* հիմնավորվում են թեմայի արդիականությունը, հետազոտության նպատակներն ու խնդիրները, գիտագործման նշանակությունը, ներկայացված է նյութի ուսումնասիրվածության աստիճանը:

Աշխատանքի *առաջին գլուխը*՝ վերնագրված «Հայոց ցեղասպանության գործոնը հայ-քուրբակյան հարաբերություններում 1991-1998թթ.», բաղկացած է երեք ենթագլուխներից:

Առաջին ենթագլխում՝ «Թուրքիայի աշխարհաքաղաքական դերի փոփոխությունը 1990-ական թվականներին և Հայոց ցեղասպանության

<sup>93</sup> Milliyet, 2000-2004.  
<sup>94</sup> Hürriyet, 1999-2004.  
<sup>95</sup> Cumhuriyet, 2000-2004.  
<sup>96</sup> Radikal, 2000-2004.  
<sup>97</sup> Sabah, 2000-2004.  
<sup>98</sup> Zaman, 2000-2004.  
<sup>99</sup> Yeni Şafak, 2003-2004.  
<sup>100</sup> Yeni Binyıl, 2004.  
<sup>101</sup> Turkish Daily News, 1996-2004.  
<sup>102</sup> Aktüel, 2000-2001.  
<sup>103</sup> Turkish Probe, 1999-2002.  
<sup>104</sup> Pöpler Tarihi Dergisi, 2003.  
<sup>105</sup> TRT, <http://www.trt.net.tr>  
<sup>106</sup> CNN-Türk, <http://www.cnntrk.com>  
<sup>107</sup> Anadolu Ajansı, 1993-2001.  
<sup>108</sup> New York Times, 2001.  
<sup>109</sup> Washington Times, 2001.  
<sup>110</sup> Washington Post, 2001-2003.  
<sup>111</sup> Hezavucumaya gazeta, 1996-2003.  
<sup>112</sup> Francepress, 1993.

գործոնը պաշտոնական Անկարայի արտաքին քաղաքականությունում», անդրադարձ է կատարվում վերջին շրջանում Թուրքիայի աշխարհաքաղաքական դերի փոփոխությանը և Հայոց ցեղասպանության խնդրի քուրբակյան մոտեցումներին:

Արդի քաղաքական իրականությունում Թուրքիան ձեռք է բերել կարևոր նշանակություն: Աշխարհաքաղաքական նպատավոր դիրքը բարձրացնում է նրա կշիռը միջազգային հարաբերություններում: Լինելով Եվրոպան Ասիայի հետ կապող ամենակարճ ճանապարհը՝ միևնույն ժամանակ Հյուսիսատլանտյան ռազմական դաշինքի երկրորդ պետությունն է չափերով և բանակի թվակազմով՝ ԱՄՆ-ից հետո: Թուրքը դիվանագետներն ու քաղաքագետները նշում են իրենց երկրի միջազգային ազդեցության ևս մի քանի ազդակ, ի մասնավորի, նրա դերակատարությունը սևծովյան տարածաշրջանում. Թուրքիայի ձգտումը՝ դառնալու սևծովյան գերտերություն, տարեցտարի ավելի ցայտուն է դրսևորվում: Նրանց կարծիքով՝ Անկարան ստանձնել է ՆԱՏՕ-ի հարավարևելյան թևի դերը և պիտի հակակշռի դեր խաղա Կովկասում ու Կենտրոնական Ասիայում և այլն:<sup>113</sup> 90-ական թվականներին քուրբերը փորձեցին մշակել արտաքին քաղաքական նոր հայեցակարգ: Իր պաշտոնավարման սկզբում արտաքին գործերի նախարար Իսմայիլ Ջեմը ծրագրային հայտարարություն արեց, ըստ որի 21-րդ դարում Թուրքիայի Հանրապետությունը նպատակ ունի դառնալ «գլոբալ պետություն»:<sup>114</sup>

Նույն շրջանում Թուրքիայի քաղաքական դաշտում առկա էին ձգողության երեք բևեռներ, որոնք որոշում էին երկրի արտաքին քաղաքականության գերակայությունները՝ ուրվագծելով արտաքին քաղաքական սեփական կուրսը: Առաջինը և առաջնայինը արևմտականացման բևեռն է՝ Եվրոպան, երկրորդ բևեռը «Թուրանն» է, իսկ երրորդը՝ միջինարևելյան գործընթացները:

Երկրորդ աշխարհամարտից հետո, ընդհուպ մինչև ուսումնասիրվող ժամանակաշրջանը, Թուրքիայի արտաքին քաղաքականությունը, հավատարիմ մնալով արաբության «խաղաղություն տանը՝ խաղաղություն ողջ աշխարհում» սկզբունքին, նշանակալի հաջողություններ չարձանագրեց<sup>115</sup>: Մական 1990 թ. Մերձավոր Արևելքում տեղի ունեցան իրադարձություններ, որոնք արմատական բեկումն մտցրին երկրի արտաքին քաղաքականության մեջ: Օգոստոսին Իրաքի զինված ուժերը ներխուժեցին Զուլեյք: Անմիջապես ջախջախվեց վերջինիս թույլ ու նվազ բանակը, իսկ իրաքյան այս հանդգնությունը բուռն քաղաքական արձագանք գտավ ողջ աշխարհում: Թուրքիան եռանդուն կերպով ներգրավվեց ՄԱԿ-ի դրոշի տակ հավաքագրվող հակաիրաքյան դաշինքին: Չնայած հետպատերազմյան ատուլիաներում նախագահ Թ.Օզալը հավաստիացնում էր, որ ժամանակն է հրաժարվել «նախկին պասիվ ու անվստահ քաղաքականությունից և ընդգրկվել ակտիվ

<sup>113</sup> Ավելի հանգամանալի տես Nezihi Çakar: A Strategic Overview of Turkey. Perceptions: Journal of International Affairs, 1998 June- August, Volume III- Number 2.  
<sup>114</sup> Ismail Cem: Turkey: Setting sail to the 21<sup>st</sup> Century. Perceptions: Journal of International Affairs, 1997 September- November, Volume II- Number 3.  
<sup>115</sup> Մինչև 1990-ականները Թուրքիայի վարած արտաքին քաղաքականության մասին ավելի հանգամանալի տես, Б. М. Поцхверия, Внешняя политика Турции после Второй Мировой Войны, М., 1976, և նույնի Внешняя политика Турции в 60-х начале 80-х годов, М., 1986.

քաղաքականության մեջ»<sup>116</sup>, նման հայտարարությունները հիմնագուրկ էին, որքան էլ հատկորեն արտահայտում էին բուրքերի իրական նկրտումները:

Թուրքիայի արտաքին քաղաքական կուրսի տեսանկյունից փոփոխությունը տեղի ունեցավ Խորհրդային Միության փլուզումից հետո: 1990թ. օգոստոսի մոսկովյան հայտնի իրադարձություններից հետո ԽՍՀՄ-ը, որպես քաղաքական հզոր միավոր, փաստորեն արդեն գոյություն չուներ: Այսրկովկասն ու Կենտրոնական Ասիան անջատվեցին հսկայական կայսրությունից, և Ռուսաստանը տարածաշրջանում կորցրեց իր քաղաքական ազդեցությունը: Իր արտաքին քաղաքական նոր կողմնորոշումը Թուրքիան պիտի դարձներ բյուրքական հանրապետությունների անվիճելի առաջնորդը:<sup>117</sup>

Վերոնշյալ երկու հանգամանքների բերումով, երկրում պաշտոնապես հասունացավ արտաքին քաղաքական գերակայությունների վերագնահատման անհրաժեշտությունը: Ստեղծվեցին նպաստավոր նախադրյալներ, երբ դիվանագիտության արժեքային և աշխատանքային մոդելները կարող էին փորձարկվել իրական քաղաքականությունում:

Հայոց ցեղասպանության ժխտման բուրքական քաղաքականությունը նոր թափ էր հավաքել դեռևս 1980-ականներին՝ կապված ինչպես երկրի ներսում, այնպես էլ նրա սահմաններից դուրս կատարվող քաղաքական անցքերի և զարգացումների հետ: 1980թ. սեպտեմբերի 12-ին իրականացվեց ռազմական հեղաշրջում, և զինվորականությունը զավթեց իշխանությունը, սաստկացնելով պայքարը ալլակարծության դեմ, Թուրքիան վերադարձնելով քեմալական ծրագրային հիմնադրույթներին: Թուրքական հասարակական գիտություններն անմիջապես հարմարվեցին ներքին ռազմաքաղաքական իրավիճակին, որդեգրեցին Հայոց ցեղասպանության ժխտման նորացված հայեցակարգ, որը դրվեց պետական գաղափարախոսություն մշակող բոլոր կառույցների աշխատանքների հիմքում: Մամուլի հրապարակումներում սկսեց գերակշռել հակահայ քարոզությունը, գրաշուկան հեղեղվեց պատմական ճշմարտությունը նենգափոխող աշխատություններով և գեղարվեստական գրականության նմուշներով:<sup>118</sup>

Միաժամանակ ծայր առավ ծրագրված արշավ, որի բիրախը միջազգային հասարակական կարծիքի ապակողմնորոշումն էր: Թուրքիայի դիվանագիտական ներկայացուցչությունները և այլազան հաստատություններ ակտիվորեն ճգնում էին կասեցնել Մեծ եղեռնի դատապարտումը Միացյալ Նահանգներում, Եվրոպական համայնքի (1992թվականից՝ Եվրոպական Միության) խորհրդարանում և այլուր երկրներում: Ուշագրավ է, որ շատ դեպքերում Անկարայի շահերի պաշտպանները շարունակել են իրենց քարոզչական գործունեությունն անգամ տվյալ երկրի խորհրդարանի կողմից ցեղասպանության փաստի ճանաչումից հետո:<sup>119</sup>

Սառը պատերազմի իրողությունները Անկարային հնարավորություն էին տալիս Հայոց ցեղասպանության ճանաչման դեմ պայքարի գործում

<sup>116</sup> Philip Robins, "Turkish policy and the Gulf Crisis: Adventurist or Dynamic?" from Clement Dodd ed. Turkish Foreign policy: New prospects: Cambridgeshire, 1992, p 70.

<sup>117</sup> Erik J. Zürcher, Turkey, A Modern history, London- NY, 1994, p 335.

<sup>118</sup> Տե՛ս М.Р. Кочар: Две Турку- Два Мировоззрения: Արևելագիտության հարցեր, 3-4, էջ 24-25:

<sup>119</sup> 1915-1917թթ. Հայոց ցեղասպանության հարցի վերաբերյալ Արգենտինայի կառավարող շրջանակների դիրքորոշման մասին, Հայաստանի ազգային արխիվ, ֆ. 326, ց. 7, գ. 106, էջ 2:

ակտիվորեն խաղարկել ՆԱՏՕ-ի գործուն և «խորհրդային վտանգի» սպառնալիքը: Հայոց ցեղասպանության ուրացումի ամենաեռանդուն քարոզարշավը բուրքական պնդությունը ծավալում էր ԱՄՆ-ում. գործին կցվել էին ոչ միայն պետական բոլոր կառույցները, այլև Կոնգրեսում ձևավորվել էր Թուրքիայի շահերի պաշտպանության խումբ: 1985թ. հունիսի 3-ին մի քանի կոնգրեսականներ (Մեյլին Փրայս, Բիլ Նիքոլս, Մարվին Լիք և ուրիշներ) նամակով դիմեցին իրենց գործընկերներին, խնդրելով կասեցնել H.J. Res. 192 բանաձևի ընդունումը, որը դատապարտում էր 1915-1923թթ. Հայոց ցեղասպանությունը:<sup>120</sup> Տեղին է հիշել նաև, այսպես կոչված «69 գիտնականների նամակը»<sup>121</sup>, որը մինչ այժմ շրջանառվում է ցեղասպանության ժխտման բուրքական քաղաքականության հովվություն:

Թուրքերի համար աղետալի եղավ հունիսի 18-ին Եվրոպական խորհրդարանի կողմից Հայոց ցեղասպանությունը դատապարտող բանաձևի ընդունումը, որն արժանացավ բուրք պետական և քաղաքական գործիչների սուր քննադատությանը:<sup>122</sup>

Այսպիսին է Հայոց ցեղասպանության խնդրի բուրքական քաղաքականության ուրվագիծը մինչև 1990-ականները, երբ Մեծ եղեռնը դարձավ հայ-թուրքական հարաբերությունների վճռորոշ հիմնահարցերից մեկը:

*Երկրորդ ենթագլխում* «Հայոց ցեղասպանության ճանաչման խնդրի արձարձումը Հայաստան-Թուրքիա միջպետական հարաբերություններում 1991-1998թթ.», համոզիչ փաստերով բացահայտվում է, որ Հայաստանի անկախության առաջին իսկ օրերից Թուրքիան հանդես է եկել պատրաստի հայեցակարգով՝ ՀՀ-ի հետ արտաքին հարաբերությունների հիմք ու նախապայման համարելով վերջինիս կողմից ցեղասպանությունը շրջանցելը:

90-ականների սկզբին, փորձելով սեփական արևմտյան հարևանի հետ երկխոսության եզրեր գտնել, նորանկախ Հայաստանը ցեղասպանության ընդգրկվեց արտաքին քաղաքական գերակայությունների շարքում, չնայած նրա միջազգային ճանաչման անհրաժեշտությունը ամրագրված էր դեռևս 1990թ. օգոստոսի 23-ին ընդունված Անկախության հռչակագրում. պաշտոնական Երևանը հանդես եկավ որևից պետությունների հետ բարիդրացիական հարաբերությունների հաստատելու պատրաստականությամբ:<sup>123</sup> Հայոց համազգային շարժման առաջնորդները անհիմն և կործանարար էին համարում այն տեսակետը, որ Հայաստանը, շրջապատված լինելով թշնամարար տրամադրված երկրներով, կարող է գոյատևել միայն հզոր պետություններից մեկի աջակցությամբ: Արդեն 1990թ. նոյեմբերին, ՀՀԸ երկրորդ համագումարում կուսակցության առաջնորդ Լևոն Տեր-Պետրոսյանը հայտարարեց. «Վերջին տարիներին քաղաքական մտքի մեջ տեղի ունեցած ամենամեծ հեղափոխությունը հրաժարումն է օտարների սպալինելու, երրորդ պետության հովանավորության վրա հույս դնելու սնանկ գաղափարից... Փնտրենք և ստեղծենք մեր ազգի գոյության նոր, ավելի հուսալի երաշխիքներ:

<sup>120</sup> "Dear Colleague" Letter distributed to all Members of the U.S. Congress by its signatories on June 3, 1985, Armenoan Allegations: Myth and reality: A handbook of facts and Documents, Compiled & edited by the Assembly of Turkish American Assosiations, Washington DC, 1987, p 39.

<sup>121</sup> The New York Times, 19, 1985.

<sup>122</sup> Հայաստանի ազգային արխիվ ֆ. 326, ց. 7, գ. 89, էջ 3:

<sup>123</sup> Տե՛ս օրինակ Հայաստանի Հանրապետություն, 28/11/1990:



Ահա այս երաշխիքների օղակներից մեկն է միայն Հայաստանի և Թուրքիայի հարաբերությունների կարգավորումը»:<sup>124</sup>

Լինելով խորհրդային հսկայաձավալ կայսրության հոգեվարքի ակնատեսն ու լուռ վկան՝ Թուրքիան 90-ական թթ. վերանայում է տարածաշրջանային իր մոտեցումները:<sup>125</sup> Սկզբում թուրքական կողմը, անգամ պաշտոնական մակարդակով, մտավախություն էր հնչեցնում ԽՍՀՄ քայքայման հետևանքների մասին<sup>126</sup>, որը հեռանկարում կարող էր սեղմել Թուրքիայի շուրջ առկա բջնամական պետությունների օղակը: Շուտով, սակայն, ելնելով տարածաշրջանում ուժերի հավասարակշռության փոփոխությունից, թուրքերը շտապեցին հայտարարել, որ 21-րդ դարը լինելու է «թուրքական աշխարհի դար»:

Հատկանշական է, որ Անկարան Հայաստանի նկատմամբ իր դիրքորոշումը հստակեցրեց միայն 1991թ. ապրիլին, երբ ՌԳ-ում Թուրքիայի դեսպան Վ. Վուրալն այցելեց Հայաստան: Ընդունելով թուրք դիվանագետին, Լ. Տեր-Պետրոսյանը նշեց. «ԽՍՀՄ-ը փոփոխությունների է ենթարկվում: Ուզում ենք բարեկամանալ: Պատրաստ ենք ամեն տեսակի փոխաշահավետ համագործակցության»:<sup>127</sup> Ի պատասխան՝ թուրք դիվանագետն արտահայտեց հայ-թուրքական հարաբերությունների կարգավորման իր տեսակետը: Եթե Հայաստանի համար առաջնային էր տնտեսական կապերի աշխուժացումը, թուրքական կողմին մտահոգում էր արցախյան հիմնահարցի լուծմունն ու հայ (խորհրդային)-թուրքական գոյություն ունեցող սահմանի ճանաչումը:<sup>128</sup> Ըստ էության, Վուրալի հետ հանդիպման ժամանակ էլ գատորոշվեցին հարաբերությունները զարգացնելու երկու պետությունների մոտեցումների տարբերությունները:

Երկու երկրների հարաբերությունների կարգավորման ծրագիրը տերպետրոսյանական վարչակարգը խաբսխում էր ավելի չափավոր հիմքի վրա՝ Հայոց ցեղասպանության հարցը նորանկախ հանրապետությունը չէր արժարժելու՝ այն վերապահելով Սփյուռքին:<sup>129</sup> Փաստորեն թուրքական կողմն առաջինն է շոշափել ցեղասպանության թեման՝ հարաբերությունների համատեքստում՝ փորձելով պարտադրել Հայաստանին չորդեգրել ցեղասպանության ճանաչման քաղաքականություն:<sup>130</sup> Ըստ երևույթին, պաշտոնական Անկարան համոզված էր, որ թուրքական սցենարի՝ իր համար շահեկան թեմադրության դեպքում, Հայաստանը կթելադրեր Սփյուռքի գործելակերպը:<sup>131</sup>

<sup>124</sup> Հայաստանի Հանրապետություն, 28/11/1990:

<sup>125</sup> Heinz Kramer, Will Central Asia Become Turkey's sphere of influence, Perceptions: Journal of International Affairs, March- May, 1996.

<sup>126</sup> Հակոբ Չաքրյան, Ղարաբաղյան հիմնահարցը հայ-թուրքական հարաբերությունների համատեքստում, Երևան, 1998, էջ 11:

<sup>127</sup> Ազգ, 30/05/2002:

<sup>128</sup> Ռ. Սաֆրաստյան, «Հնարավոր չէ 21-դարում պատնեշներ ստեղծել հարևանների միջև...», Երևան, 2003, էջ 39:

<sup>129</sup> Հայ-թուրքական հարաբերություններում Հայոց ցեղասպանությանը չանդրադառնալու համատեքստում թերևս պիտի դիտարկել ԳԳ ԱԳ նախկին նախարար Բ. Գովհաննիսյանի պաշտոնակազմում վերջինիս Ստամբուլում բարձրաձայնած խիզախ ելույթի համար:

<sup>130</sup> ՀՅԹԻ Ֆոնդ, բաժին 32, թպ. 26, փ. 5, էջ 4:

<sup>131</sup> Լույս տեղում, էջ 4:

1991թ. դեկտեմբերի 16-ին, Թուրքիան, ի թիվս խորհրդային մյուս հանրապետությունների, ճանաչեց նաև Հայաստանի անկախությունը, սակայն պաշտոնական Երևանի հետ դիվանագիտական հարաբերություններ չհաստատեց:<sup>132</sup> 1992թ. փետրվարին Դավոսի տնտեսական ֆորումին մասնակցող Հայաստանի նախագահը Լ. Տեր-Պետրոսյանը փորձեց հանդիպել Թուրքիայի վարչապետ Ս. Դեմիրելին. զուսպ մերժում ստացավ:<sup>133</sup> Նույն քվականի հուլիսին հանդիպումը կայացավ:

Ինչևէ, 1992թ. օգոստոսին պաշտոնական այցով Երևան եկավ թուրքական դիվանագիտական պատվիրակությունը՝ փոխարտգործնախարար Բ. Ունանի գլխավորությամբ: Ինչպես նշում է նախագահի Ժ. Լիպարիտյանը, Թուրքիայի ԱԳ-Ն պատվիրակության հետ բանակցությունների ժամանակ Հայոց ցեղասպանության խնդիրը չի քննարկվել<sup>134</sup>, այլ «բարձրացվել է տարբեր առիթներով, ոչ պաշտոնական ձևով, այնպես, ինչպես ընդհանուր շահերից բխող այլ հարցեր»:<sup>135</sup>

Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման գործընթացին, որը ՀՀ իշխանությունների կողմից համարվում էր Սփյուռքի գործունեության ոլորտ: Մեծ Եղեռնի 80-րդ տարելիցին նվիրված միջազգային գիտաժողովի ամբիոնից նախագահ Լ. Տեր-Պետրոսյանը հայտարարեց, որ Հայոց ցեղասպանության մտահոգման, նախապատրաստման և իրագործման ողջ պատասխանատվությունը ընկնում է Սուրբան Համդիի և երիտթուրքերի վրա: Թուրքիայից չպահանջվեց պաշտոնապես ճանաչել ցեղասպանությունը: Իր ելույթում նախագահը հույս էր հայտնում, որ երկկողմ հարաբերություններում պիտի հաստատվի առողջ բանականության և բարձր բարոյականության մթնոլորտ:<sup>136</sup>

1995թ. ամռանը Հայաստան այցելեց Ստամբուլի էսենյուրք արվարձանի համայնքի ղեկավար Գյուրբայր Չափանը: Ինչպես նշում է այցը լուսաբանող թուրքական «Հուրիյեթը», Չափանը առաջին թուրք պաշտոնյան էր, որը ծաղիկներ դրեց Ծիծեռնակաբերդի հուշահամալիրում: ՀՀ նախագահի հետ հանդիպման ընթացքում, թեթի վկայությամբ, Տեր-Պետրոսյանը կոչ է արել պատմությունը թողնել պատմաբաններին:<sup>137</sup>

90-ականների կեսերին արդեն պարզ էր, որ հայ-թուրքական քաղաքական հարաբերությունները մտել են անհաղթահարելի փակուղի: Հայաստանի Հանրապետությանը չհաջողվեց որևէ «նոր և լուրջ մոտեցում մշակել՝ միտված թուրքական կողմի հետ հարաբերությունների բարելավմանը»: Այդ իրողությունն է արձանագրում ՀՀ արտգործնախարար Վահան Փափազյանը: Իր ծրագրային հողվածում, նվիրված անկախ Հայաստանի արտաքին քաղաքականության հնգամյակին, նա փաստում է, որ իրական տեղաշարժեր այդ ոլորտում չեն գրանցվել:<sup>138</sup>

Արդյո՞ք արդարացված էր ՀՀ որդեգրած՝ ցեղասպանության ճանաչման ձեռնպահ քաղաքականությունը և արդյո՞ք հնարավոր էր, մնան փոխզիջման

<sup>132</sup> U. Çeviköz, Uluslararası İlişkileri yeni dengel, Ermenistan Özel Sayisi, TESEV, Agustos, 2001, s. 11.

<sup>133</sup> N. Pope & H. Pope, Turkey Unveiled, New York, 1997, p 292.

<sup>134</sup> ՀՅԹԻ Ֆոնդ, բաժին 32, թպ. 26, փ. 5, էջ 3:

<sup>135</sup> Նույն տեղում, էջ 3:

<sup>136</sup> Pecnyobuka Armenia, 22/04/1995.

<sup>137</sup> Hürriyet, 04/07/1995.

<sup>138</sup> Հայաստանի Հանրապետություն, 15/09/1996:

գնով զարկ տալ երկկողմանի հարաբերություններին: Ըստ Էուրյան, Տեր-Պետրոսյանի վարչակարգը, ցեղասպանության թեման շնդղորկելով արտաքին քաղաքական օրակարգում, Թուրքիայից որևէ զիջում չկորզեց: Ընդհակառակը, բուրքերը առիթը բաց չէին թողնում հայտարարելու, որ Հայաստանի հետ հարաբերությունների բարելավման նախապայմաններն անփոփոխ են:<sup>139</sup> Իրականում Անկարան Երևանի հետ չէր ցանկանում զարգացնել բնականոն հարաբերություններ. չնայած վերջինիս «չափավոր» քաղաքական գծին: Դա Հայաստանի նկատմամբ թշնամական քաղաքականության ժառանգական դրսևորում էր:<sup>140</sup>

*Երրորդ ենթագլուխը՝ «Հայ-թուրքական հասարակական հարաբերությունների առաջին կառույցներն ու երկխոսության մոտեցումների ձևավորումը», անդրադարձ է կատարվում գիտական ու հասարակական շրջանակներում հնչող այն տեսակետներին, որոնք կարևորելով հայ-թուրքական կառուցողական երկխոսությունը, առաջարկում են հարաբերությունների բարելավման տարաբնույթ ուղիներ:*

Երկու պետությունների միջև դիվանագիտական հարաբերությունների բացակայության պայմաններում փորձարկվեցին հասարակական դիվանագիտության, կամ այլ կերպ ասած՝ երկրորդային դիվանագիտության (second track diplomacy) միջոցներն ու հնարավորությունները: Ձևավորվեցին (ոչ առանց դրսի ուժերի շահագրգիռ աջակցության աջակցության) կառույցներ, որոնց գործունեության նպատակը հայ-թուրքական երկխոսության ձևավորումն էր:

Հասարակական շփումները կարելի էր անվերապահորեն ողջունել, եթե որոշ նախաձեռնությունների վրա չխարսխվեին թուրքական պետության կողմից տարփոխվող «պատմությունը՝ պատմաբաններին» թեգի վրա: Սակայն ի՞նչ կարելի է անկնալել այդ երկխոսությունից, եթե որպես պարտադիր նախապայման, ի սկզբանե, շահարկվում է Հայոց ցեղասպանության հարցը:

Ի վերջո, հասարակական դիվանագիտությունը կոչված է կատարելու երկխոսության հասարակական պատվերը: Գործընթացը այնտի ներառի ժողովուրդների համայնա բոլոր շերտերը՝ արտահայտելով ու պաշտպանելով նրանց հավաքական շահերը: Հասկանալի է, որ հասարակական դիվանագիտությունը պետք լինի անմիջական, երկկողմ, չպետք պարտադրվի դրսից: Նման երկխոսությունը միտված է դիրքորոշումների իրական մերձեցմանը, ապա և հաշտեցմանը, և չի սպասարկում երրորդ կողմի աշխարհաքաղաքական նկրտումները:

Հասարակական երկխոսության բազմազան շփումներում հիմնական դերը ստանձնել են Թուրք-հայկական գործարարության զարգացման կոմիտեն (ԹՀԳՁԿ)<sup>141</sup> և Թուրք-հայկական հաշտեցման հանձնաժողովը (ԹՀՀՀ):<sup>142</sup> Թուրք-հայկական գործարարության զարգացման կոմիտեն հիմնվել է 1997թ. մայիսի 3-ին, Հայաստանի և Թուրքիայի գործարարների համագործակցությանը աջակցելու: Կազմակերպությունը գործում է մինչ օրս: Թուրք-հայկական

<sup>139</sup> Turkish Daily News, 31/10/1997.  
<sup>140</sup> Տե՛ս նաև Ջ. Մարդյան, Հայկական հարցի հոլովոյթը 1988-1993-ի միջև, Հայկագետն Հայագիտական հանդես, Պեյրուք, 1995, N ԺԵ, էջ 235-301:  
<sup>141</sup> Կազմակերպության մասին ավելի հանգամանալի տե՛ս, <http://www.tabdc.org>.  
<sup>142</sup> Կազմակերպության պաշտոնական համացանցային կայքի բացման մասին հայտարարվել է 2004թ. հունվարի 12-14 ԹՀՀՀ-ի Լոնդոնում կայացած հանդիպման ժամանակ: Տե՛ս <http://www.tarc.info>.

հաշտեցման հանձնաժողովը, որի գործունեությանը նվիրված էր ատենախոսության երրորդ գլուխը, ստեղծվել է 2001թ. հուլիսի 9-ին:

Հընթացս, թուրքական գիտական և հասարակական շրջանակներում արդեն իսկ հնչում են տեսակետներ, որոնք ոչ միայն չեն մերժում հայ-թուրքական կառուցողական երկխոսությունը, այլև փորձում են հարաբերությունների բարելավման ուղիներ ներկայացնել: Հետզհետե թուրքական հասարակությունում ձևավորվում է մի այնպիսի շերտ, որը չի ժխտում Հայոց ցեղասպանությունը, և անգամ կոչ է անում թուրքական կառավարությանը ընդունել պատմական ճշմարտությունը: Ինչպես վերը նշվեց, ազգամիջյան երկխոսության ջատագովներից է Թաներ Աքչամը: Ցեղասպանության ժխտման պատճառները և հայ-թուրքական հարաբերությունների բարելավումը Աքչամի գիտական պրպատումների հիմնական ոլորտն են:<sup>143</sup> Պատմաբանը, երկխոսության քաղաքական որոշումն ընդունելու պատասխանատվությունը դնում է Թուրքիայի իշխանությունների վրա:<sup>144</sup> Իրավապաշտպան Բ.Ջարաբոլուն, որը չի վախենում բացահայտորեն մատնանշել 1915-ի ողբերգության պատասխանատուներին. «Սարդկային այս կորուստների քաղաքական պատասխանատվությունն ընկնում է անկասկած իր քաղաքացիների դեմ պատերազմ հայտարարած Սիոթյուն և Առաջադիմություն կուսակցության վրա»:<sup>145</sup> Փաստորեն, պաշտոնական Անկարան ստիպված է պայքարել իր իսկ երկրի ներսում ձևավորված երկրորդ ճակատի դեմ:

*Երկրորդ գլուխը՝ «Հայոց ցեղասպանության ճանաչման խնդիրը՝ Հայաստան-Թուրքիա հարաբերություններում 1998-2004թթ.», բաղկացած է երկու ենթագլուխներից:*

Առաջին ենթագլուխը՝ «1998թ. նախագահական ընտրությունները և Հայոց ցեղասպանության հիմնախնդրի արժարժումը ՀՀ արտաքին քաղաքականությունում», անդրադառնում է նախագահական ընտրություններից հետո՝ Հայաստանի կողմից ցեղասպանության միջազգային ճանաչման նոր դիրքորոշմանը և նրա արձագանքներին: Հայոց ցեղասպանության խնդրի արժարժումը պաշտոնական Երևանի կողմից, թուրք քաղաքագետները բնութագրեցին որպես Հայաստանի քաղաքականության կոշտացում:<sup>146</sup>

1998թ. հրապարակավ, առաջին անգամ ՄԱԿ-ի ամբիոնից Ռ. Քոչարյանն ասաց. «Օսմանյան կայսրությունում հայերի 1915 թվականի ցեղասպանությունը իր ժամանակին պատշաճ կերպով չդատապարտվեց համաշխարհային հանրության կողմից, ինչը որոշ վարչակարգերի խրախուսեց նոր հանցագործություններ կատարել... Այս շարքի դեմ պայքարի անհրաժեշտության հարաճուն ընթացման վկայությունն են նաև ներկա դարակազմին հայերի ցեղասպանության դատապարտումն ու ընդունումը մի շարք երկրների խորհրդարանների կողմից»:<sup>147</sup> 1998-2000թթ. Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման ոլորտում էական տեղաշարժ նկատվեց: Մասնավորապես, չնայած թուրքական ճնշումներին, Ֆրանսիայի Ազգային ժողովը 1998թ. մայիսի 29-ին ճանաչեց Հայոց ցեղասպանությունը, իսկ 2000թ.

<sup>143</sup> Yeni Binyil, 1/10/2000.  
<sup>144</sup> Taner Akcam, Dialogue Across an International Divide: Essays Towards a Turkish-Armenian Dialogue, p 19.  
<sup>145</sup> ՀՅԹԻ Ֆոնդ, բաժին 32, քա. 26, փ. 1, էջ 3:  
<sup>146</sup> Այս մասին ավելի հանգամանալի տե՛ս Ս. Շևիկօզ, նշվ. աշխ., էջ 13:  
<sup>147</sup> <http://news.president.am/arm/?sub=statements&year=1998&mode=1>.

նոյեմբերի 8-ին, Սենատը ձայների 164 կողմ, 40 դեմ և 4 ձեռնպահ հարաբերակցությամբ վերահաստատեց ստորին պալատի որոշումը: 2001թ. հունվարի 9-ին նախագահ Շիրակն իր ստորագրությամբ վավերացրեց օրենքը:<sup>148</sup>

2001 թվականին, անդրադառնալով երկկողմ հարաբերությունների զարգացումներին, ՀՀ նախագահը երկխոսության ձևափոխման հիմնական մեղքը վերագրում էր թուրքական կողմին. «Թուրքիայի մնում է անգիջողական ադրբեջանամետ կեցվածքի և Հայաստանի շարունակվող շրջափակման պատասնդը: Սենք Թուրքիային կոչ ենք արել և շարունակում ենք կոչ անել Հայաստանի հետ հարաբերություններ սկսել առանց նախապայմանների: 1915թ. հայերի ցեղասպանության փաստը ճանաչելու Թուրքիայի շարունակվող մերժումը մնում է հոգեբանական և քաղաքական խոչընդոտ, որը պետք է հաղթահարվի: ...Քանի դեռ Թուրքիան շարունակում է մերժել այդ անցյալը, մեր հաշտեցումը մնում է անվստահության պատասնդ»:<sup>149</sup>

Ինչ խոսք, հայ-թուրքական հարաբերությունների վրա իր անմիջական ազդեցությունն է բողնում Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման գործընթացը: Բերենք մի օրինակ. 2000թ. հոկտեմբերին հայկական լրբխտական խմբերի ակտիվ գործունեության արդյունքում ԱՄՆ-ի Ներկայացուցիչների պալատի օրակարգ էր մտնելու Հայոց ցեղասպանությունը դատապարտող H.Res. 398 բանաձևը:<sup>150</sup> Բննարկումների սկզբից էլ պարզ էր, որ լուսնները Թուրքիայի համար աննպաստ էին լինելու: Պաշտոնական Անկարան վերստին շրջանառության մեջ մտցրեց իր նախընտրած քաղաքական հնարքներից մեկը՝ շանտաժը, պարտադրելով Բիլ Բլինթոնին 2000թ. սեպտեմբերի 18-ին առանձին ուղերձով դիմել պալատի խոսնակ Դենիս Հասթերթին: Ըստ թուրքական անվտանգության խորհրդում շրջանառվող ծրագրերի, Հայաստանի նկատմամբ կիրառվելու էին 17 պատժամիջոցներ, որոնցից առաջինը՝ ՀՀ քաղաքացիների անցագրային ռեժիմի խստացումը, ուժի մեջ մտավ հենց քննարկման օրերին: Թուրքերը մշակել էին ամերիկացիների դեմ գործողությունների 34 կետից բաղկացած վերջնագիր, որը պիտի իրականացվեր, եթե ամերիկյան օրենսդիրները հավանություն տային բանաձևին:<sup>151</sup>

Հայ-թուրքական միջպետական հարաբերություններում կարևոր նշանակություն ունեցավ Օսկանյան-Ջեմ-Գուլիև առաջին եռակողմ հանդիպումը՝ 2002թ. մայիսի 14-15-ին, Ռեյկյավիկում, արտգործնախարար Իսմայիլ Ջեմի նախաձեռնությամբ: Վերադարձից հետո Ջեմը հրապարակեց էր Հայաստանի հետ հարաբերություններ հաստատելու հիմնական նախապայմանները.

- Հայաստանը պետք է բողնի ցեղասպանության հարցը պատմաբանների ուսումնասիրմանը.

<sup>148</sup> Լ. Բարսեղյան, Ֆրանսիան Դայոց ցեղասպանությունը օրենսդրությամբ ճանաչած առաջին պետությունն է աշխարհում, Երևան, 2002, էջ 83-86:

<sup>149</sup> Նախագահ Ռ. Քոչարյանի ելույթը Արգենտինայի միջազգային հարաբերությունների

06/05/2002: <http://news.president.am/arm/?sub=statements>

<sup>150</sup> Այս մասին ավելի հանգամանակի տե՛ս Լ. Բարսեղյան, «Ամերիկայի Միացյալ Նահանգները, Դայոց ցեղասպանությունը և թուրքական հակազդեցությունը», Երևան, 2001:

<sup>151</sup> Նույն տեղում էջ, 65:

- Հայաստանը պետք է իր Սահմանադրությունից վերացնի տարածքային պահանջների հողվածները.
- Պետք է լուծվի Լեռնային Ղարաբաղի հիմնախնդիրը՝ ինչը, ըստ Թուրքիայի, նշանակում է Ղարաբաղի տարածքից հայկական բանակի դուրսբերում.
- Հայաստանը պետք է միջանցք տրամադրի՝ Ադրբեջանի և Նախիջևանի կապի ապահովելու համար:<sup>152</sup>

*Երկրորդ ենթագլուխը* վերնագրված է «Խորհրդարանական ընտրությունները Թուրքիայում և հայ-թուրքական հարաբերությունները 2002-2004թթ.»։ 2002թ. ամռանը Թուրքիան ապրեց տնտեսական խորը ճգնաժամ, որի պայմաններում անցկացվեցին Ազգային մեծ ժողովի ընտրությունները: Կուսիցիոն կառավարությունը երկրի տնտեսությունը հասցրել էր փլուզման, կայուն վատթարացել էր սոցիալ-տնտեսական վիճակը: Ուստի պատահական չէ, որ արդարացան «Արդարություն և բարգավաճում» ու Հանրապետաժողովրդական կուսակցությունների հաղթանակի մասին թուրքական մամուլի կանխատեսումները: Խորհրդարանում մեծամասնություն ստացավ «Արդարություն և բարգավաճում» կուսակցությունը, որը մինչ այդ թուրքական օրենսդիր մարմնում ներկայացված չի եղել: Կուսակցության փոխնախագահ Աբդուլլահ Թիվչիբենը հայտարարեց. «Հայաստանն ու Թուրքիան հարևան երկրներ են, և մենք ունենք պատմական ու մշակութային կապեր հայերի հետ... Դա նշանակում է, որ մեր արտաքին քաղաքականությունը չպետք է հենված լինի թշնամանքի վրա... Մենք փորձում ենք պահպանել լավ հարաբերություններ Հայաստանի և այլ երկրների հետ: Սակայն Թուրքիան չի ցանկանում վտանգի տակ դնել հարաբերությունները Ադրբեջանի և միջինասիական երկրների հետ»:<sup>153</sup>

Թուրքիայի նոր քաղաքական վերնախավի նման հայտարարությունները հիմնված էին հետևյալ իրողությունների վրա: Նախ՝ մոտենում էր Եվրոպական միության կույեննազգեյան գագաթաժողովը, որտեղ հավանական էր Թուրքիայի անդամակցության հարցի արժարծումը: Երկրորդ՝ նորընտիր իշխանությունները դեռևս լիարժեք չէին պատկերացնում հայ-թուրքական հարաբերությունների նրբությունները: Թուրքիայի արտաքին գործերի նախարար Յաշար Յաքչըլը անգամ հայտարարեց, որ հնարավոր էր համարում Հայաստանի հետ հարաբերությունների զարգացումը՝ շրջանցելով Ադրբեջանի նկատմամբ դաշնակցային պարտավորությունները. «Եթե տնտեսական շահերը պահանջեն, Հայաստանի հետ հարաբերություններ կստեղծենք»:<sup>154</sup>

Ամերիկա-բրիտանական գորբերի ներխուժումը Իրաք դարձավ 2003թ. խոչորագույն զինված բախումը: Պատահական չէ, որ այդ թվականից երկկողմ հարաբերությունների վրա իրենց դրոշմը բողեցին աշխարհաքաղաքական փոփոխությունները: Մինչ Թուրքիան հրաժարվում էր ամերիկացիներին տրամադրել իր ռազմական հենակետերը Իրաքի վրա լայնածավալ հարձակում սկսելու համար, թուրքական մամուլը ազմուկ բարձրացրեց, թե ԱՄՆ-ի նախագահը սպառնացել է Անկարային Հայոց ցեղասպանության ճանաչման բանաձևի ընդունմամբ:<sup>155</sup>

<sup>152</sup> Տե՛ս Նոյյան Տապան, 17/05/2002, <http://www.nt.am>.

<sup>153</sup> Ազգ, 12/11/2002:

<sup>154</sup> Turkish Daily News, 17/12/2002.

<sup>155</sup> Ազգ, 11/7/2003:

2004թ. գալարածն ընթացող հայ-թուրքական հարաբերություններում նոր եռուզեռ նկատվեց՝ հատկապես հաճախացան արտագործնախարարների շփումները: Թուրքիայի ԱԳՆ մամուլ խոսնակ Նամըք Թանը մայիսին հայտարարեց, որ իր երկիրը ցանկանում է Հայաստանի հետ հաստատել բարիդրացիական կապեր:<sup>156</sup>

2004թ. հոկտեմբերին Եվրամիության հանձնաժողովն ընդունեց «Թուրքիայի անդամակցության առաջընթացի մասին» զեկույցը, իսկ զագաքաժողովը հաստատեց այդ առթիվ բանակցություններ սկսելու սկզբունքային որոշումը: Վեհաժողովին նախորդել էր Եվրախորհրդարանի նիստը, որտեղ ձայների մեծամասնությամբ պատգամավորները կողմ էին քվեարկել Թուրքիայի անդամակցությանը, սակայն առաջ էր քաշվել Հայոց ցեղասպանությունը ճանաչելու խնդիրը՝ կրկնորդելով 1987թ. հայտնի բանաձևը:

*Երրորդ գլուխը*՝ «Թուրք-հայկական հաշտեցման հանձնաժողովը, հասարակական երկխոսությունը և Հայոց ցեղասպանության գործունը», բաղկացած է երկու ենթագլուխներից:

*Առաջին ենթագլխում* քննության են առնված Թուրք-հայկական հաշտեցման հանձնաժողովի ստեղծումն ու գործունեության ընթացքը՝ 2001 քվականին:

ԹՀՀՀ-ն երկրորդային դիվանագիտության ամերիկյան մոդելի տեղայնացումն էր: Հանձնաժողովի աշխատանքները լայնորեն քննարկվեցին Հայաստանում. Սփյուռքում և Թուրքիայում: Համաձայն որոշ լավատեղյակ առյուրների՝ բանակցություններն սկսվել են առնվազն 2001թ. գարնանը, սակայն այդ մասին հրապարակավ հայտարարվեց ավելի ուշ՝ 2001թ. հուլիսի 9-ին:<sup>157</sup> Հաշտեցման հանձնաժողովի գոյառումը Հայաստանում և Սփյուռքում սառն ընդունելության արժանացավ: Թուրք հասարակական կարծիքը զուսպ-լավատեսական էր, լավատեսությամբ էր համակված մաս ամերիկյան արձագանքը:<sup>158</sup>

Թուրք-հայկական հաշտեցման հանձնաժողովի գործունեությունը մեծ վերապահումով կարելի է համարել իրական հասարակական երկխոսություն: Առաջին իսկ օրվանից ԹՀՀՀ-ի նկատմամբ մոտեցումները միանշանակ չեն եղել: Հանձնախմբի ծպտյալ աշխատառճը և նրա շուրջ ստեղծված բարոյաժողովրդական մթնոլորտը խորացրին հետագա ձախողումները: Հայտարարելով, թե քննարկումների համար «տարուներ չկան», հանձնաժողովականները հաճախ ձեռք էին մեկնում այնպիսի հարցերի, որոնք վեր էին իրենց իրավատեսությունից, պահանջում էր պատասխանատու մոտեցում և մասնագիտական հմտություններ: Ավելին, ԹՀՀՀ-ի գործունեությունը սկսեց շահարկվել ի վնաս՝ Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման գործընթացին: Հանձնաժողովի հայ անդամները այդպես էլ չհասկացան, որ իրենց թուրք գործընկերներն ի գորու չեն հրաժարվելու տարիներ շարունակ իրենց իսկ կողմից որդեգրած ժխտման բարոյությունից: Թուրքերին էլ չի երիքեց քաղաքական խիզախությունը՝ հաղթահարելու պատմության սեփական քյուրընթրումը: Հավելյալ խոչընդոտ էր հանձնաժողովի աշխատանքներում

<sup>156</sup> Երկիր, 21/05/2004:

<sup>157</sup> St'u TARC, Terms of Reference, from <http://www.tarc.info>, 27/12/2004, ինչպես նաև D. Philips, Unsilencing the Past, pp 10-40.

<sup>158</sup> Հանձնաժողովի գործունեությանը հանգամանալի անդրադարձը տե'ս, Արամ Սնանյան, «Պայ-թուրքական երկխոսության նոր փորձ (Թուրք-հայկական հաշտեցման հանձնաժողովի գործունեության մասին)», Երևան, 2003:

Պետդեպարտամենտի ներգրավվածությունը: Ինչպես արդեն նշվել է, տարածաշրջանային շահերից ելնելով ԱՄՆ-ը ձգտում էր ամերիկյան մոդելի «ստատուս քվո» հաստատել Կովկաս-կենտրոնասիական աշխարհագրական գոտում: Միացյալ Նահանգներում գիտակցում են, որ հայ-ուսական ռազմաքաղաքական ակտիվ համագործակցության էական խթաններից մեկը Թուրքիայի կողմից Հայաստանին սպառնացող ռազմական ներխուժման վտանգն է: Ամերիկյան տեսանկյունից՝ հայ-թուրքական հաշտեցումը կթուլացնի պաշտոնական Երևանի կախվածությունը մոսկովյան թելադրանքից:

Ստեղծման պահին այն միավորում էր վեց թուրք և չորս հայ գործիչների: Հայկական կողմը ներկայացնում էին Ալեքսանդր Արզումանյանը (ՀՀ նախկին արտգործնախարար և ՀՀԿ կուսակցության առաջնորդ), Գավիթ Հովհաննիսյանը (Միրիայում 1992-1998 թթ. ՀՀ նախկին դեսպան, հատուկ հանձնարարություններով դեսպան), Անդրանիկ Սիրանյանը (քաղաքագետ, Ռուսաստանի հայերի միության վարչության անդամ) և Վան Գրիգորյանը (Ամերիկայի հայկական համագումարի հոգաբարձուների խորհրդի նախագահ): Թուրքական կողմից ընդգրկված էին նախկին դեսպան Գյունդուզ Աքբանը, Ռուբուն Էրզուղերը (Բողազլի համալսարանի նախկին ռեկտոր), ավիացիայի գեներալ-լեյտենանտ Սադի Էրզուվենչը\*, նախկին փոխարտգործնախարար Օզդեմ Սանրերը, հոգեբան Վամըկ Վոլկանը, թուրքական արտաքին գործերի գերատեսչության նախկին ղեկավար Իլթեր Թուրքմենը:

2001թ. սեպտեմբերի 23-25-ին Ստամբուլում կայացավ ԹՀՀՀ երկրորդ հանդիպումը, որին մասնակցում էին հանձնաժողովի բոլոր անդամները: Զննարկվեց հանձնաժողովի գործունեության ընթացքը, վերլուծվեցին մամուլի հրապարակումները, ի մասնավորի՝ ընդունվեցին ԶԼՄ-ների հետ շփումների «կառուցողական սկզբունքները»:

Հանձնաժողովի հաջորդ նիստը տեղի ունեցավ նոյեմբերի 18-ին՝ Նյու Յորքում: Որոշվեց դիմել Անցումային արդարադատության միջազգային կենտրոն (ԱԱՄԿ)՝ Հայոց ցեղասպանության նկատմամբ 1948թ. «ՄԱԿ-ի Յեղասպանության մասին կոնվենցիայի» կիրառելիության հայցով:

*Երկրորդ ենթագլխում* «ԹՀՀՀ պատակտումն ու աշխատանքների դադարեցումը», վերլուծվում են կառույցի պատակտման, վերամիավորման և

\* «Ազգ» օրաթերթի 03/10/2001թ. համարում բացահայտվում է այս անձնավորության իրական դեմքը, իրականում պաշտոնաթող գեներալի անունը ոչ թե Սադի է, այլ Շադի (հավանաբար շփոթությունը տեղ է գտել թուրքերեն S և Ş տառերի տարբերությունում պատճառով): Վերջինս 1981թ. հուլիսին, դեռևս գեներալ-մայորի զինվորական աստիճանով զբաղեցրել է Թուրքիայի անվտանգության խորհրդի և թուրքական զինված ուժերի գլխավոր շտաբի հետախուզության համատեղ վարչության պետի պաշտոնը և գործուն մասնակցություն է ունեցել պատմական ճշմարտությունը նենգափոխող աշխատությունների լույս ընծայման գործում:

փլուզման հիմնական պատճառները: 2001թ. դեկտեմբերի 11-ին հանձնաժողովի հայ անդամները հանդես եկան համատեղ հայտարարությամբ. ըստ որի առժամանակ սառեցնում են իրենց անդամությունը ԹՀՀՀ-ին, քանզի թուրք գործակիցները միակողմանիորեն հանձնարարել են ԱԱՄԿ-ին՝ դադարեցնել նախապես համաձայնեցված ուսումնասիրությունը:<sup>159</sup> Թուրքերի նման վարքագիծը վերստին ապացուցեց, որ նրանք ամեն գնով առաջ են տանելու ցեղասպանության ժխտման իրենց կարծիքը դիքորոշումը: Ի դերս ելան մաս հայ անդամների պնդումները, քե իրենք թուրքերի հետ համախոհների թիմ են:

Չնայած փոխադարձ մեղադրանքներին, Թուրք-հայկական հաշտեցման հանձնաժողովը որոշ ժամանակ անց կրկին հավաքվեց բանակցային սեղանի շուրջը: Հերթական նիստը տեղի ունեցավ 2002թ. հուլիսի 11-13-ին՝ Բողոքում առողջարանային քաղաքում: Քննարկվեցին նախորդ հանդիպումների «ձեռքբերումները», ինչպես նաև Կարս-Գյումրի երկաթուղու ապաշրջափակման հարցը և այլն: Հանձնաժողովի անդամները վերահաստատել են իրենց որոշումը՝ դիմելու Անցումային արդարադատության միջազգային կենտրոնին. այդ առնչությամբ ընդունվել է փոխընթացման հուշագիր:<sup>160</sup> ԹՀՀՀ-ն. սակայն, չէր կատարել հիմնադիր փաստաթղթի պահանջը՝ իր իսկ աշխատանքների գնահատումը, որը պիտի կատարվեր հանձնաժողովի ստեղծումից մեկ տարի անց: Բողոքումում չեն ճշտվել ԹՀՀՀ-ի հաջորդ հանդիպումն անցկացնելու վայրը և ժամանակը:<sup>161</sup>

Հետագայում, սեպտեմբերի 10-ին, հանձնաժողովի թուրքական և հայկական կողմերը Անցումային արդարադատության միջազգային կենտրոն են ներկայացրել զեկույցներ, որոնց հիման վրա պիտի կատարվեր նշված վերլուծությունը:

2003թ. փետրվարի 10-ին հայտնի դարձավ, որ Կենտրոնն ավարտել է իր ուսումնասիրությունները և եկել է այն եզրահանգման, որ 1915թ. իրադարձությունները, կարող են որակվել իբրև ցեղասպանություն, սակայն 1948թ. կոնվենցիան չի կարող կիրառվել Առաջին աշխարհամարտի ընթացքում տեղի ունեցած իրադարձությունների նկատմամբ: Այս երկդիմի եզրակացությունն անգամ առիթ դարձավ, որ երկու թուրք անդամ քեն հանձնախումբը:

2003թ. հաշտեցման հանձնաժողովի նիստեր տեղի ունեցան Լոնդոնում և Ստամբուլում: ԹՀՀՀ-ն քրամ թուրք անդամների փոխարեն՝ ընդգրկվեցին նորերը: Այս ամենը հասարակական երկխոսության ընթացքի մեջ բեկում չմտցրեց, իսկ 2004թ. Լոնդոնում և Մոսկվայում նիստեր գումարելուց հետո՝ ԹՀՀՀ-ն հայտարարեց ինքնալուծարման մասին:

Ատենախոսության վերջաբանում ամփոփ ներկայացված են աշխատանքի հիմնական եզրահանգումները:

- Հայոց ցեղասպանության խնդիրը եղել և մնում է հայ-թուրքական հարաբերությունները պայմանավորող հիմնական գործոնը:

<sup>159</sup> Տարեգիր, 11/12/2001, տե՛ս [www.taregir.am](http://www.taregir.am), նաև Առավոտ, 13/12/2001:

<sup>160</sup> Ցեղասպանության հանցագործությունը կանխարգելելու և պատժելու մասին Միավորված Ազգերի Կազմակերպության կոնվենցիայի կիրառելիությունը քսաներորդ դարի սկզբին տեղի ունեցած իրադարձությունների նկատմամբ: Անցումային արդարադատության միջազգային կենտրոնի համար պատրաստված իրավական վերլուծություն, 10/02/2003, էջ 1:

<sup>161</sup> Ազգ, 17/7/2002:

- 1980-ականներից հետո Հայոց ցեղասպանության ուրացության քարոզչությանը նոր թափ հաղորդած Թուրքիան, 1991թ. Հայաստանի հետ չհաստատեց դիվանագիտական հարաբերություններ՝ պահանջելով, որ Երևանը նույնպես մոռանա Մեծ եղեռնի իրողությունը:
- ՀՀ առաջին իշխանությունների՝ Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչումը արտաքին քաղաքականության օրակարգից դուրս թողնելու գործելաոճը իրեն չարդարացրեց, և հայ-թուրքական հարաբերություններում 1991-1998թթ. տեղաշարժեր չեղան:
- 1998թ. ՀՀ նախագահական ընտրություններում հաղթանակած Ռ. Քոչարյանը հայտարարեց, որ Հայաստանը հետամուտ է լինելու Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչմանն ու դատապարտմանը:
- Հայոց ցեղասպանության ճանաչման հրամայականը տեղ գտավ նաև Թուրքիա-Եվրոպա հարաբերություններում:
- Միջպետական բնականոն հարաբերությունների բացակայության պայմաններում, նշված ոլորտում մշտապես առաջացել են հասարակական երկխոսության կառույցներ, որոնք շոշափելի արդյունք չեն տվել: Անգամ կիսապաշտոնական ԹՀՀՀ ստեղծումն ու փլուզումը վերստին ապացուցեցին. որ թուրքերի պատրաստ չէ ճանաչելու ցեղասպանությունը:

Ատենախոսության թեմայով հեղինակի հրապարակումները.

1. Հայոց ցեղասպանության ժխտման թուրքական քաղաքականությունը հայ-թուրքական հարաբերությունների համատեքստում, «Գարուն», գրական-գեղարվեստական, հասարակական-քաղաքական անկախ ամսագիր, Երևան, N 11, 2002, էջ 10-16:
2. Ամերիկյան և ցեղասպանության դարը: Հարց դժոխքից, «Գարուն», գրական- գեղարվեստական, հասարակական-քաղաքական անկախ ամսագիր, Երևան, N 7-8, 2003, էջ 72-74:
3. Հայոց ցեղասպանությունը հայ-թուրքական երկխոսության հարցի համատեքստում, «Հայոց ցեղասպանության պատմության և պատմագրության հարցեր», ՀՀ ԳԱԱ ՀՅԹԻ, Երևան, N 9, 2004, էջ 3-27:
4. Համացանցի գործոնը Հայոց ցեղասպանության ժխտման համատեքստում, «Հայոց ցեղասպանության պատմության և պատմագրության հարցեր», ՀՀ ԳԱԱ ՀՅԹԻ, Երևան, 2005, N10-11, էջ 1-15:
5. Ուրացության Փակեռի, «Ազդակ-Երկիր» բացառիկ, Բեյրութ, ապրիլ, 2005, էջ 226-230:
6. Հայոց թուրքական երկխոսության նոր փորձ. Թուրք- հայկական հաշտեցման հանձնաժողովի գործունեության մասին, Երևան, 2003, ՀՀ ԳԱԱ ՀՅԹԻ, 154 էջ:
7. Հայոց ցեղասպանության ժխտման նոր փորձ. Թուրքական պատմական ընկերակցության «Հայեր. Աքսոր և գաղթ» աշխատության մասին, Երևան, 2005 ՀՀ ԳԱԱ ՀՅԹԻ, 92 էջ:

АРАМ ЛЕВОНОВИЧ АНАНЯН  
ФАКТОР ГЕНОЦИДА АРМЯН В АРМЯНО-ТУРЕЦКИХ ОТНОШЕНИЯХ (1991-  
2004гг)

Диссертация на соискание ученой степени кандидата исторических наук по специальности 07.00.01- "История Армении"  
Защита состоится 21 июня 2005г. в 14.00 по адресу: Ереван, пр. М. Баграмяна 24 г., на заседании специализированного совета 004 при Институте истории НАН РА.

РЕЗЮМЕ

В диссертационной работе нашли отражения вопросы, касающиеся армяно-турецких политических отношений: фактора геноцида армян и его актуальности в формировании двухсторонних связей. В работе прослеживается эволюция внешней политики Армении в отношении Турции. Актуальность и новизна исследуемой темы состоит в том, что впервые осуществлена попытка комплексно и многопланово осветить и проанализировать проблемы, касающиеся современного этапа армяно-турецких отношений. Впервые введена в научный оборот проблема армяно-турецких отношений в постсоветский период. Данная исследовательская работа не только ценна и интересна с научной точки зрения, но и имеет практическую применимость.

Во введении обоснована актуальность и своевременность изучаемых проблем, очерчены временные рамки, проанализирован документально-фактический материал.

Глава 1: "Проблема геноцида армян в армяно-турецких отношениях (1991-1998 гг.)" Освящены вопросы, трансформации геополитики Турции в 1990-х гг. и фактор геноцида армян во внешней политике Анкары. Отражены также вопросы, касающиеся формирования и развития армяно-турецко общественных отношений и двухстороннего диалога.

Отмечается, что несмотря на корректировку своей внешней политики в отношении Еревана, Анкара в целом придерживалась доктринерского и косного подхода во взаимоотношениях с Арменией.

Глава 2: "Проблема признания геноцида армян в армяно-турецких взаимоотношениях в 1998-2004 гг."

Освещены вопросы армяно-турецких отношений, в частности, после президентских выборов в 1998 г. и парламентских выборов в Турции в 2002г. Армяно-турецкие взаимоотношения рассматриваются также в экономико-политическом аспекте. Проанализирована политика США в отношении двухстороннего диалога и нормализации армяно-турецких отношений. Делается вывод, что факт признания Турцией геноцида армян не является для Европы решающим фактором вступление Турции в Евросоюз.

Глава 3: "Турецко-армянская комиссия по примирению, общественный диалог и фактор геноцида армян."

Проанализированы вопросы, имеющие отношение к формированию и деятельности армяно-турецкой комиссии, прослежены причины ее расформирования и подытожены результаты ее деятельности. Отмечается, что формат и повестка деятельности турецко-армянской комиссии не способствовали установлению и формированию истинно-взаимовыгодных отношений между Анкарой и Ереваном.

В заключении подытожены основные выводы и результаты проделанной исследовательской работы.

